Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 176 ՀԻՆԳՇԱԲԹԻ 2 ՕԳՈՍՏՈՍ 1884 (Ն. Տ.) 14 ՕԳՈՍՏՈՍ 22 ՇԷՎՎԱԼ 1301

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՅՄԱՆՔ

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ. երկու անգամի համար 2 ղուրուշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։

Օրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն պէտք է ուղղել

«Առ խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. Ղալաթիա, Նորատունկեան խան.
իսկ գաւառներէն հետեւեալ հասցէիւ՝

درعليه ده غلطه ده نورادونكيان خانده {اره ولك}
غزته سى اداره سنه

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Պոլսոյ | համար | Տարեկան | դահեկան | արծաթ | 200 |
| » | » | Վեցամսեայ | » | » | 100 |
| » | » | Եռամսեայ | » | » | 50 |
| » | » | Հատով | » | » | 1 |
| Գաւառաց | համար | Տարեկան | » | » | 240 |
| » | » | Վեցամսեայ | » | » | 120 |
| » | » | Եռամսեայ | » | » | 60 |
| Օտար | երկիրներ | Տարեկան | Ֆրանք | | 56 |
| » | » | Վեցամսեայ | » | | 28 |

Դուրս ղրկուած լրագրաց նամակատան ծախքը խմբագրութեան վրայ է։

40 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ
ՀԻՆԳՇԱԲԹԻ 2 ՕԳՈՍՏՈՍ

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԻՐԹՈՒԹԻՒՆ

Որպէս զի ազգային գործերը լաւագոյն վիճակ մը ստանան, անհրաժեշտ է որ Ազգ. Ժողովոյ դիրքը բարձրանայ։ Հանրային իշխանութիւնք մեր մէջ բարոյական է լոկ, և բարոյական իշխանութեան մը առաջին պայմանն է պատկառելի լինել։ Արդ, մինչեւ որ Տեարք Երեսփոխանք լաւ չհասկնան թէ ի՛նչ է խորհրդարանական բարեկրթութիւն, չենք կրնար յուսալ թէ Ազգ. Ժողովն առաւել պատկառելի պիտի հանդիսանայ յաչս ժողովրդեան։ Ցաւալի է տեսնել թէ Երեսփոխան էֆէնտիներ, յատենի ժողովոյ, անպատշաճ խօսքեր, անձնական դիտողութիւններ և մինչեւ իսկ նախատական ակնարկութիւններ կ'ուղղեն իրարու դէմ։ Այսպիսի ընթացք մը արդէն բաւական պարսաւելի է մասնաւոր ընկերութեանց մէջ։ Բայց ճշմարիտ յանցանք մը կը դառնայ երբ ի գործ կը դրուի ազգային ժողովոյ մը մէջ, և անպատուութիւն կը բերէ թէ ժողովին, և թէ նոյն մարմնոյ բոլոր ուրիշ անդամներուն, որք աւելի նախանձախնդիր են խորհրդարանական և ընկերական բարեկրթութեան։ Բարեկրթութիւնն ալ նշան մ'է ընդհանուր առաջդիմութեան։ Կրթութեան ընդհանրապէս թերի վիճակ մ'ունեցող հասարակութեան մը մէջ, խորհրդարանական վարմունք ընկերական վարմանց ազդեցութիւնք կը կրեն, և աւելի կամ նուազ կոշտ են։ Զայս ցոյց կուտայ ամեն խորհրդարանական ազգի պատմութիւնը։ Բայց մինչդեռ Հայ [illegible] Կ. Պոլսոյ հասարակութեան մէջ ընկերային վարմունք հետզհետէ կ'ազնուանան, ցաւով կը տեսնենք թէ Ազգ. Ժողովոյ մէջ ի գործ դրուած բարեկրթութեան աստիճանը բարձրացած չունի։ Երեսփոխան Տեարք իրենց շուրջը նայելով կրնան տեսնել թէ 15-20 տարիէ ի վեր շատ փոխուած է Հայ ընկերութեան քաղաքավարութեան վիճակն։ Հանրային թերթերը մանաւանդ՝ քաղաքավար ոճով գրելու, փափուկ լեզու մը գործածելու և անձնականութիւններէ զգուշանալու մասին մեծ առաջդիմութիւն բրած են 10-15 տարի առաջ հրատարակուող թերթերուն վրայ։ Ընկերութեանց և զանազան հանրային գումարմանց մէջ փոխադարձ վարմունք բարեկրթութեան իդէալի մը աւելի մօտ են այսօր։ Դժբախտաբար, Ազգային Ժողովոյ մէջ և շուրջն ասոր հակառակը կը տեսնենք։ Եղած է ժամանակ մը, յորում Ազգային Ժողովն աւելի պատկառելի էր. որովհետեւ իւր նիստերու մէջ բանախօսութիւնք, դիտողութիւնք և քննադատութիւնք աւելի քաղաքավար ոճով կը կատարուէին քան այժմ։ Բայց ժամանակէ մ'ի վեր Ժողովոյ շրջափակին մէջ անձնական անհաճոյ միջադէպեր և ժողովոյ շուրջը գանակոծութեանց և այլ կոշտ վարմանց տեսարաններ միայն կը տեսնենք։ Այս վիճակ ողբալի է, և երբեւ ազգային թերթ մեր պարտականութիւնք կատարել կը կարծենք այդպիսի վիճակի մը վրայ Տեարց Երեսփոխանց ուշադրութիւնն հրաւիրելով։ Այն Երեսփոխանք որ անպատշաճ խօսքերով և անվայել վարմունքով բարեկրթութեան սահմաններէն դուրս կ'ելնեն Ժողովոյ մէջ, կամ Ժողովոյ շուրջը, մեծագոյն թշնամիներն են Ազգային Ժողովոյն ալ, Երեսփոխանութեան ալ, Սահմանադրութեան ալ. որովհետեւ սահմանադրական դրութեան վարկը կը կոտրեն Ազգին առջեւ, ժողովուրդը կը պաղեցնեն իր ներկայացուցիչն եղող կարեւորագոյն Մարմնէ մը, և այսպէս Սահմանադրութեան թշնամեաց խորհուրդներն ու դիտումները կը դիւրացընեն։

Բարեկրթութեան կանոնաց ուշադրութիւն չընելով Երեսփոխանք ոմանք այսպէս անուղղակի կերպիւ վնասելէ զատ ազգային գործոց, ուղղակի եւս կը վնասեն՝ կիրքերն յուզելով և կուսակցական օրինաւոր մրցումներու վրայ անձնական թշնամանքներ աւելցնելով, որով [illegible] ազգային խնդրոց պաղ արեամբ և անկողմնակալութեամբ քննութիւնն ու վճռաբանութիւնը, նիւթերը կ'երկարաձգին, կը յետաձգին, և անոնց հետ աւելի խնդրոց կարգադրումն ալ կը յապաղի։ Տարբեր արդիւնք ձեռք կրնար բերուիլ եթէ ընդդիմադիր Երեսփոխանք իրարու նկատմամբ քաղաքավար ընթացք մը բռնէին, բարեկիրթ անձանց վայել ոճով խօսէին, և միայն քննելի խնդրով զբաղէին, փոխանակ գրգռիչ ակնարկութիւններ ընելու իրարու անձնական և բարոյական թերութեանց, և անցած գացած ընթացից ու վարմանց վրայ։ Ազգ. Ժողովն արդէն բաւական դժուարութեամբք շրջապատեալ է իւր առջեւ եղած խնդրոց գոհացուցիչ կարգադրութիւն մը տալու մասին։ Պէ՞տք է միթէ որ Տեարք Երեսփոխանք իրենց ձեռօք նոր դժուարութիւն մ'աւելցնեն ատոնց վրայ, և գրեթէ կամովին արգելք լինին Ազգ. Ժողովոյ աշխատանաց։ — Զենք կարծեր թէ այս աստիճան չզգաստիրական ոգւով վառեալ Երեսփոխաններ կարենան գտնուիլ։ Այն անհաճոյ միջադէպեր որոց մերթ ընդ մերթ հանդիսատես կը լինինք ամենայն տխրութեամբ, թերեւս ո՛չ այնքան չարամտութեան, որքան անուշադրութեան և անտարբերութեան հետեւանք են։ Եթէ այսպէս է, փափաքելի էր որ Տեարք Երեսփոխանք աւելի մեծ խնամ տանէին Ազգ. Ժողովոյ մէջ խօսելու և շարժելու այն ամենայն բարեկրթութեամբ ու ծանրութեամբ, որք վայել են պատկառելի Ժողովոյ մը։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԵԳԻՊՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

### ՏԷՐՈՒԹԻՒՆՔ Ի ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴ

Թէեւ Դեսպանախորհուրդն ելք չունեցաւ, և ցրուեցաւ առանց կարգադրելու եգիպտական խնդրոյն ելմտական մասը, բայց իւր Ատենագրութիւնք, զորս անգլիական կառավարութիւնն հրատարակեց, կարեւորութենէ զուրկ չեն, այսու զի ցոյց կուտան զանազան մեծ Տէրութեանց հայեացքն այս խնդրոյ թէ՛ քաղաքական և թէ՛ ելմտական կողմին վրայ։ Հետեւապէս, կը մտածենք թէ մեր ընթերցողաց համար անօգուտ չեն լինիր ինչ ինչ քաղուածներ, զորս կ'առնենք ընել յիշեալ Ատենագրութիւններէ։

Եւ նախ, Դեսպանախորհուրդն զբաղեցնող խնդրոյն վրայ ամփոփ գաղափար մը տալու համար, կը թարգմանենք այն ելմտական առաջարկներ, զորս լորտ Կրանվիլ և ելմտական նախարար Պ. Չիլտըրս ներկայացուցին Դեսպանախորհրդոյ։

« 1. Անգլիա եգիպտական կառավարութեան պիտի երաշխաւորէ 8,000,000 անգլիական ոսկւոյ փոխառութիւն մը, որոյ տոկոսներն և գլխավճարն ի միասին պիտի հասնին $4 \frac{1}{2}$ առ 100ի։ Այս փոխառութեան տոկոսեաց վճարումն առաջնութիւն պիտի ունենայ Եգիպտոսի բոլոր ուրիշ փոխառութեանց վճարման վրայ։

« 2. Եգիպտական զանազան փոխառութեանց տոկոսներն, ինչպէս որ են այսօր, ի միասին առնլով նաեւ ի հաշիւ Անգլիոյ կնքեալ Սուէզի ջրանցքի փոխառութեան տոկոսները, պիտի իջեն 100ին կէս զեղչ մը։

« 3. Նոյրր այս փոխառութեանց գլխամասին կամ մայր–գումարին վճարումը պիտի դադրի։

4. Եգիպտոսի գանձուն ամեն տարւոյ հասոյթին աւելցած մասը պիտի բաժնուի։ Կէսը պիտի յատկանայ յաջորդ տարւոյ, միւս կէսն ալ պիտի յատկանայ զանազան փոխառութեանց գլխավճարին, ի միասին առնլով երաշխաւորեալ նոր փոխառութիւնը։

« 5. Անգլիական գրաւման բանակին ծախուց համար եգիպտական գանձը տարին 300,000 ոսկիէ աւելի չպիտի վճարէ։»

Երբ Ֆրանսական դեսպան և լիազօր Պ. Վատինկթըն այս առաջարկութեանց դէմ առարկութիւններ բրաւ, մանաւանդ պարտուց տոկոսին զեղչման դէմ խօսելով, և խնդրեց Նախագահէն որ միւս լիազօրաց կարծիքն առնու, լորտ Կրանվիլ խօսք տուաւ միւս լիազօրներուն՝ անոնց ներկայացուցած երկիրներուն այբուբենական կարգով։

Գերմանական դեսպան Մ Մինսթէր կոմս ըսաւ թէ լիազօրք դժուար կացութեան մը մէջ են։ Ամենէն աւելի շահակից տէրութիւնք (Անգլիա և Ֆրանսա) համաձայն չեն ո՛չ թիւերու, ո՛չ ալ սկզբանց վրայ։ Կոմսը կը վերապահէ իւր քուէն։

Աւստրիական դեսպան Քարոլի կոմս կը փափաքէր համաձայնութիւն մը գոյացնել Անգլիոյ և Ֆրանսայի հակառակ տեսութեանց միջեւ, բայց միոյն կամ միւսին ի նպաստ կարծիք յայտնելով չի յուսար այս արդիւնքը ձեռք բերել։ Աւստրիական կառավարութիւնը տեղեկութեան բաւական ստոյգ միջոցներ չունի, վճռելու համար թէ ո՛ր կողմին հաշիւները ճիշդ են։ Կոմսը կը յանձնարարէ որ Անգլիա և Ֆրանսա [illegible], և այս յուսով կը վերապահէ իւր քուէն։

Իտալիոյ դեսպան կոմս Նիկրա սա յայտարարութիւնն ըրաւ.

« Դեսպանախորհուրդը կոչուած է որոշում տալու երկու հակառակ կարծեաց վրայ։ Անգլիական կառավարութիւնը կը կարծէ թէ Եգիպտոսի արտաքոյ պիտոյից հայթայթման համար անհրաժեշտ է 8 միլիոն ոսկւոյ փոխառութիւն մը հանել, զոր տրամադիր է երաշխաւորել ամբողջովին կամ մասամբ, բայց այն պայմանաւ որ եգիպտական արժէթղթերը յանձն առնուն իրենց տոկոսեաց ժամանակաւոր կամ վերջնական զեղչ մը։ Միւս կողմէ, Ֆրանսական կառավարութիւնը կ'ընդունի փոխառութեան մը հարկն, առանց գումարին վրայ կարծիք յայտնելու, և կ'առաջարկէ որ այս փոխառութիւն փոխանակ միայն Անգլիոյ կողմէ երաշխաւորուելու, Տէրութեանց կողմէ հաւաքաբար երաշխաւորուի։ Ֆրանսա կը կարծէ թէ եգիպտական ելմտացոյցի հասոյթք կը բաւեն բոլոր պիտոյից, այնպէս որ տոկոսները զեղչելու ծանր պայմանին դիմել հարկ չէ։ Անգլիա և Ֆրանսա, երկուքն ալ Քօնթրօլի ժամանակ, մասնակցած են Եգիպտոսի վարչութեան, և Քօնթրօլի դադրումէն յետոյ, Անգլիա ստանձնած է այդ վարչութեան պատասխանատուութիւնն։ Հետեւապէս, անգլիական և ֆրանսական երկուց կառավարութեանց կարծիքներն ունին այն ամեն հեղինակութիւն, որ առաջ կուգայ երկրին պիտոյից գործնական ծանօթութենէն և Անգլիա ալ ունի յատուկ հեղինակութիւն մը, արդիւնք այն եղելութեանց որք զինք բերին դրին այն կացութեան մէջ, զոր այժմ բռնած է Նեղոսի վրայ։ Իտալիա քիչ մը տարբեր կացութեան մը մէջ կը գտնուի, ինչպէս նաեւ միւս չորս տէրութիւնք, որք ներկայացեալ են աստ։ Իտալիա չմասնակցեցաւ Քօնթրօլին, և թէպէտ ներկայացուցիչ ունի եգիպտական պարտուց համագործային յանձնաժողովոյն մէջ, բայց գրապէս միջամտած չէ եգիպտական վարչութեան վերաբերեալ գործոց։ Այս վարչութեան նկատմամբ մեր գործնական ծանօթութիւն նուազ է ուրեմն։ Դեսպանախորհրդոյ կողմէ կարգեալ պաշտօնակալ մասնախումբն իւր կրցածն ըրաւ վճռելու լուսաւորելու եգիպտական ելմտացոյցին հասութից և պարտուց վրայ։ Սակայն մի քանի կարեւոր կէտերու վրայ անհամաձայնութիւն կայ ու կը կենայ։ Իմ կողմէ մեծամտութիւն կը լինի կարծել թէ աստ իմ յայտնելիք մէկ կարծիքս վերջ պիտի տայ այդ անհամաձայնութեան։ Բայց խնդրոյն վերաբերեալ պաշտօնագրերն հաղորդեցի առ արտաքին գործոց նախարարն Իտալիոյ, և Պ. Մանչինի արտօնեց զիս յայտարարելու թէ.

«Միւս Տէրութեանց և Անգլիոյ հետ «այն կարծիքն ունինք թէ տոկոսեաց զեղչն «ուրիշ կերպ պէտք չէ նկատել բայց եթէ «տխուր հարկ մը ա՛յն պարագայի մէջ երբ «բացարձակապէս անհնար է խուսափիլ անկէ։ Այս մասին կարծեաց անհամաձայնութիւն ծագած լինելով, չենք կրնար աքօղել թէ Անգլիա ուրիշ ամեն տէրութենէ «աւելի կարող դիրքի մէջ է հաշուելու ե«գիպտական ելմտացոյցին հասոյթներն և «պէտքերն իւր ամբողջութեամբ և մէն մի «մասին մէջ առանձինն։ Հետեւապէս, ե«թէ անգլիական լիազօրը ամեն վճռաբանութենէ յետոյ պնդեն տակաւին «թէ տոկոսեաց զեղչն անհրաժեշտ է, մեք «չենք կրնար տարբեր կարծիք մը յայտնել, «որովհետեւ Դեսպանախորհրդոյ նպատակն ո՛չ միայն Եգիպտոսի պարտատեարց «շահերը պաշտպանել է, այլ նաեւ մանաւանդ Խտիւական երկրին վարչային և ելմտական այնպիսի կացութիւն մը տալ է, «զոր ամեն Տէրութիւնք կատարելապէս հաստատուն կարենան նկատել։»

«Արդ, կը յարեմ. Եթէ Անգլիա և Ֆրանսա կրնան համաձայնիլ միակ առաջարկի մը վրայ, որ չնեղի Դեսպանախորհրդոյս ներկայացեալ զանազան ծրագրաց հիմերէն, առ որ ընդունելութիւնն Իտալիոյ կողմէ՝ չի կրնար տարակուսական լինել, և ես ալ պաշտօն ունիմ զայս ծանուցանելու։»

Ռուսիոյ դեսպան Պարոն տը Սթաալ կը հաստատէ թէ այս ծանրակշիռ վիճաբանութեան մէջ ռուս կառավարութեան միակ փափաքն է Դեսպանախորհուրդը նպաստաւոր վախճանի մը յանգած տեսնել, այնպէս որ ամեն շահերն ալ արդար գոհացում ստանան։ Դժբախտաբար, երկու կողման ծրագրերն ա՛յնչափ հակառակ են, որ դժուար է հաշտեցնել զանոնք։ Բայց յուսահատեցուցիչ պարագայ մը չէ այս։ Թո՛ղ Անգլիա և Ֆրանսա նախապէս համաձայնին իրենց մէջ, և Ռուսիա հաշտարար և անկողմնակալ ոգւով կուտայ իւր հաւանութիւնն։ Առ այժմ, Պարոնք կը վերապահէ իւր քուէն։

Օսմանեան դեսպան Մուսուրուս փաշան սա յայտարարութիւնն ըրաւ.

«Ինձ գալով, ես եգիպտական պարտուց տոկոսներուն զեղչման կողմն եմ։ Ներեցէք որ համառօտիւ բացատրեմ այս կարծիքս։ 100ին առ 100 կնքեալ և 4 առ 100 տոկոս բերող փոխառութիւն մը, երաշխաւորեալ նիւթական և իրական այնպիսի ապահովութեամբք զորս կուտայ Լիքիտասիոնի օրէնքը, նոյնչափ հաստատ և աւելի շահաւոր է, քան լաւագոյն վարկ ունեցող Պետութեանց արժեթուղթերն։ Արդ, յայտնի է թէ եգիպտական փոխառութիւնք ա՛յնչափ ծանր պայմաններով կնքուեցան, որ երբեք կատարուած տոկոսի վճարումները բաւական չեն. և կը կարծեմ թէ արդար եւ Եգիպտոսի և իւր պարտատեարց հաւասարապէս շահաւոր կը լինի տոկոս որոշել 4 առ 100 ի հրապարակ հանման գնոյն վրայ, պայմանաւ որ եգիպտական կառավարութիւնն այս տոկոսեաց յատկացնէ հաստատ և լիովին բաւական հասոյթներ, այս հասոյթք գանձուին ուղղակի յանձնաժողովոյ մը կողմէ որ ներկայացուցիչ լինի արժետեարց իրաւանց, և վեհապետական իշխանութիւնը (Վեհ. Սուլթանը)՝ Դեսպանախորհրդոյս մէջ ներկայացեալ տէրութեանց հետ միաբանութեամբ՝ որոշէ թէ այս կարգադրութիւն յետ այսորիկ ո՛ և է պարագայի մէջ փոփոխման չպիտի ենթարկի, թէ՛ տոկոսեաց քանակութեան և թէ՛ յատկացեալ հասութից մասին։ Եթէ այս կարգադրութիւն մի կողմէ պարտատէրերը կը զրկէ իրենց ստացած տոկոսին մի փոքր մասէն, միւս կողմէ յոյժ կը բարձրացնէ նոյն արժեթղթոց արժէքն, որք ի հրապարակ հանման գնէն վար են այսօր։

« Գալով Դեսպանախորհրդոյս ներկայացեալ եգիպտական ելմտացոյցի ծրագրերուն և Եգիպտոսի հասութից և ծախուց վրայ կարծեաց տարբերութեան, ինչպէս նաեւ՝ արդի ելմտական վարչութիւնը պահպանելու կամ փոփոխելու խնդրոյն, — ես կը պնդեմ թէ, անգամ մը որ Եգիպտոս ո՛ եւ է կերպիւ լիովին գոհացնէ իւր պարտատե-

---

## ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

)( 4 )(

ՖՈՐԹԻՒՆԷ ՏԻՒ ՊՈՒԱԿՈՊԷ

## ՊԱՐՈՆ ԼԸՔՕՔԻ ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՈՆ ԼԸՔՕՔ ԻՆՔԶԻՆՔ ԿԸ ԾԱԾԿԷ

### Ա.

Դալով զինքը խօսեցնելու դժուարութեան, չնչին բան է։ Առաջին հարցաքննութիւնը լաւ սկսելու վրայ է գործը։

Ծերոյ իւր յուշատետրին վրայ ծանօթութիւններ գրել կեղծելով, քանի մը վայրկեան աչերը խոնարհեցուցած կեցաւ։

—Դուք գիտէիք այդ արկղին մէջ գտնուածն, այնպէս չէ՞, տղա՛ս, հարցուց յանկարծ քաղցր ձայնիւ։

Ա՛յնչափ վստահ էր ամբաստանելոյն «ոչ» պատասխանելուն վրայ իրեն եղած այս անակնկալ հարցման, որ մեծ սրտանեղութիւն զգաց երբոր տեսաւ որ երիտասարդն իրեն եղած հարցումն և ոչ իսկ լսած կ'երեւէր։

Սակայն չվհատեցաւ.

—Շատ աղէկ, ըսաւ։ Դուք լռելու կենալու դրութիւնն ընտրած էք։ Գէշ չէ այդ դրութիւն, տղա՛ս, մեք ալ գիտենք, բայց կը յորդորեմ ձեզ որ շուտով ի բաց թողուք, վասն զի երեք չորս ամիս ծակը մնալէ յետոյ չէք կրնար շարունակել։ Մնաց որ ձեր շահն իսկ կը պահանջէ յայտնել ճշմարտութիւնը, վասն զի ես այնպէս համոզուած եմ որ դուք յանցաւոր չէք։ Դուք այս գործին մէջ հաւանաբար երկրորդական դեր մ'ունեցած էք. եթէ այդ արկղը ձեզ տուող մարդը գտնելու օգնէք մեզ, ձեր անմեղութիւնը շուտով կը հաստատուի։ Գուցէ իսկ կրնամ անմիջապէս ազատ թողուլ ձեզ։

Ամբաստանեալն այս յանկուցիչ խօսքերուն առջեւ սառի պէս անզգած կեցաւ։ Բայց նշանական մնջկատակով մը պատասխանեց՝ ձեռքը բերնին և ականջներուն տանելով։

— Ըսել կուզէք թէ խուլ–համր էք, ըսաւ հարցաքննիչը. պիտի տեսնենք զայդ. ես ամեն լեզուներն ուսած եմ, մինչեւ իսկ համրաց լեզուն։

Հանճարեղ պաշտօնատարին այս խօսքը մնապարծութիւն չէր։ Նախատեսելով այս տեսակ պարագայները, Տը Լէրէ աբբային մեթոտն ուսած էր, և կրնար շատ գաղափարներ յայտնել մատներով։

Ուստի սկսաւ նշանացի բանախօսութիւն մ'ընել՝ դատաւորէ մ'աւելի ծանրութեամբ, զոր փոքր ի շատէ կրթեալ խուլ–համր մը կրնար կատարելապէս հասկնալ։

Մարդն յայտնի ուշադրութեամբ մը անոր շարժումներուն հետեւեցաւ, և սրտնեղութեան նշաններ նկարուեցան դէմքին վրայ։

Կարծես թէ կը ջայրանար չկրնալ հասկնալուն վրայ, բայց յայտնի կը տեսնուէր թէ չէր հասկնար։

— Օ՛, ըսաւ ինքնիրեն ապահովութեան պետը, կարծածէս աւելի վարպետորդի է, բայց չնշմարեր որ ինքզինք կը դատապարտէ. չափահաս եղող և նշանացի լեզուն հասկցող խուլ–համր մը տեսնուած չէ երբեք։ Ստուգիւ չարաճճին ինձմէ աւելի խուլ չէ։ Վերջին փորձ մ'ալ ընեմ և յետոյ ուրիշ գործողութեանց կ'անցնինք։

Եւ արագ գրութեամբ մը հետեւեալ խօսքը գրեց մեծ թուղթի մը վրայ և ձերբակալին աչաց առջեւ դրաւ։

«Կառավարութենէ ազատումնիդ տակաւին ձեր ձեռքն է։ Բայց եթէ այդ լռութեան վրայ յամառիք, ի մահ պիտի դատապարտուիք և գլխատուիք։ Ահա ես կ'ըսեմ ձեզ զայս և չեմ սխալիր. վասն զի արդէն տասն և եօթն մարդ ղրկած եմ ի Ռօքէթ, որք ձեզ չափ իսկ կասկածելի չէին։»

Խեղճ մարդը, ճարահատեալ, աչերը թուղթին վրայ նետեց, դէմքը ծամածռեց Աւստրալիացի վայրենիի մը նման՝ որ երկոտասաներորդ դարու հրովարտակ մը կարդալու բռնադատուի, և գլուխը տխրութեամբ ցնցելով թուղթն ետ մղեց։

— Ցանուն երկնի՛ց, ըսաւ ինքնիրեն ապահովութեան պետն, եթէ այս ապուշը խուլ–համր չէ, ժամանակիս ամենէն մեծ կատակերգակն է որ կը տեսնեմ այս գիշեր։

Աւասիկ մեծ միջոցներու դիմելու վայրկեանն։

Ոտքի վրայ ելաւ, և պահակապետին նշան ընելով գնաց վայրկեան մը խօսակցեցաւ անոր հետ նրբանցքին մէջ. յետոյ վերադարձաւ և սեղանին առջեւ նստելով՝ պահականոցին տոմարը թղթատել սկսաւ։

Ձերբակալն, երկու պահակներու միջեւ անշարժ կեցած, իւր անտարբեր և ձանձրացեալ դէմքը բնաւ փոխած չէր։

— Օ՛ն, ըսաւ յանկարծ ապահովութեան պետը, կը տեսնեմ որ սխալած էի։ Ձեզ բանտէն փախած դատապարտեալ մը կարծած էի, զոր ամսէ մ'ի վեր կը փնտռենք. բայց այժմ ստուգեցի որ այն մարդուն դէմքն ու կերպարանքը չեն նմանիր ո՛չ ձեր հասակին, ո՛չ տարիքին։ Ուստի կրնաք ձեր բնակարանն երթալ, տղա՛ս։

Մարդը բնաւ չշարժեցաւ։

— Թո՛ղ տուէք երթայ, ըսաւ ճարտար հարցաքննիչն, և դուրս ելած ժամանակ գաւաթ մը օղի տուէք խեղճին, որ արժանի է, վասն զի շատ վախցած է անշուշտ։

Պահակներն իրարու երես կը նայէին հարցնելու կերպիւ թէ արդեօք ապահովութեան պետը լրջօրէ՞ն կը խօսէր. բայց մարդն անդրդուելի կը կենար։

Ցայնժամ ապահովութեան պետն աչք ըրաւ պահակապետին, որ սրահին ծայրը կեցած էր. նա ալ իսկոյն ատրճանակ մը պարպեց օդին մէջ։

Ամբաստանեալն և ոչ իսկ այն ակամայ ցնցումն ունեցաւ, զոր ամենէն պատերազմափորձ զօրականն իսկ չկրնար զսպել՝ երբոր իւր մօտն հրացանի մ'անակնկալ պայթիւնը լսէ։

Միայն թէ, երբոր վառօդին հոտն եկաւ իւր ռունգերը խտղտեց, սկսաւ քիթը շփել, և ետին դարձաւ նայելու համար թէ ուստի կուգար ծուխը։

Այս անգամ փորձը վճռական էր։

— Այժմ կ'սկսիմ հաւատալ թէ արդարեւ խուլ է, մրմռաց ապահովութեան պետն յուսահատեալ, և շատ կը վախնամ որ այս շունը մեզ շատ պիտի յոգնեցնէ։

Ծերոյ ճակատն զարնելով.

— Պէտք է որ այս առաւօտ երթամ հայր Լըքօքը տեսնեմ, ըսաւ ինքնիրեն. նա միայն կրնայ հնար մը ցուցընել մեզ։

Պահակապե՛տ, ըսաւ բարձրաձայն, այս մարդը կեդրոնական բանտը ղրկեցէք, մնացածն ալ դիւանատանը։

Եկէք, տղեկնե՛ր, երթանք, ալ հոս գործ չունինք։

* * *

### Բ.

Բոնթի գետափը Փարիզի ամեն գետափանց զուարթագոյնն է. Փօղերանոցին և Ճեմարանին միջեւ գտնուած տուները Բոնթի գետափին ամենէն զուարթներն են. և այդ առանձնաշնորհեալ տուներն ստուգիւ Պ. Լըքօք տը Ժանթիյիէն աւելի զուարթ և աւելի երջանիկ բնակիչ չունին։

Այս երկու անպատշաճապէս լծորդեալ անուանց տէրն առոյգ ծերունի մ'է, որ գետափին վրայ նայող երրորդ դստիկոնին մէջ բռնած գեղեցիկ բնակարանին վարձքն օրին կը վճարէ, և լաւ հասոյթ ունեցող մարդ մը ճանչուած է։

Թաղին ամենէն քաղցրահամբոյր, սիրուն և մարդասէր քաղաքացին է, և տասն տարիէ ի վեր հոն կը բնակի։ Իւր սովորոյթներուն մէջ ալ ամենէն կանոնաւորն է։ Անփոփոխապէս որոշ ժամերու մէջ նախաճաշ կընէ, դուրս կ'ելնէ, կը պտըտի, տուն կը վերադառնայ և կ'ընթրէ։

Կէս օրին՝ Բոն Տէզ Ար կամուրջէն մինչեւ Բոն Ռուայալ կամուրջին եզերքներուն վրայ հին գիրքեր կը թղթատէ. քառասուն վայրկեան յետոյ կը տեսնես որ հաց կը փշրէ Թիւյլըրիի ճնճղուկներուն, որք զայն ճանչնալով կ'երթան ուսերուն վրայ կը դառնին ընտանեբար։ Ժամ երկուքէն մինչեւ չորս՝ կարթով ձուկ կ'որսայ Բոնքորտի կամուրջին առաջին կամարներուն տակ։

Միայն կիրակի օրը կը փոխէ իւր զբօսանաց հիմնագիրն։ Որդին կուգայ նախաճաշել անոր տունն, և յետոյ կ'առնու գիւղը կը տանի զայն՝ օրն անցընելու և ընթրելու։

Վասն զի Պ. Լըքօք տը Ժանթիյեի որդի մ'ունի, քսան և ութամեայ գեղանի երիտասարդ մը, զոր գորովագին կը սիրէ, թէ և շաբաթն անգամ մը միայն կը տեսնէ։

Այս որդին իրաւագիտութեան տօքթէօրի վկայական ստացած է, և կ'ըսուի թէ կը խորհի գնել գրասենեակն այն նօտարին, որուն առաջին դպիրն է։

Հայրը դժուարութիւն չպիտի կրէ այդ ծախքը վճարելու, վասն զի քսանամեայ խնայողութիւնք հարստացուցած են զայն. ասկից զատ, յաջողած է իւր միակ ժառանգորդին համար յոյժ գեղեցիկ ամուսնութիւն մը պատրաստել, որ ընդ հուպ պիտի կատարուի։

Ուստի թէ՛ իւր տանտիրոջ, թէ՛ դրացիներուն և թէ՛ իւր հետ առեւտուր ընողներուն յարգն ու համակրանքը կը վայելէ, թէ և ոչ ոք գիտէ ճշդիւ թէ ի՛նչ բրած է ժամանակաւ, և ի՛նչպէս վաստըկած է իւր հարստութիւնն։

Արդարեւ իւր ծնունդը փնտռելու հետամուտ եղան քիչ մը, և իւր անցեալն հետաղօտեցին՝ երբոր Բոնթի գետափը բնակելու եկաւ գաւառէն, ինչպէս ինք կ'ըսէր։

Մինչեւ իսկ քիչ մը քաշքշեցին իւր մասնաւոր անունն. ըսին թէ Պ. Լըքօք պարզապէս Ժանթիյեի մէջ ծնած էր Փարիզի մօտ, և թէ՝ շատերու պէս՝ ինքզինք իւր գիւղին անուամբ իշխանն անուանած էր առանց դատական նախարարութենէն արտօնութիւն ստանալու։ (Շարունակելի) րերն, ո՛չ պարտատէրք, ո՛չ ալ այն Տէրութիւնք որոց հպատակներն են, իրաւունք կամ պատճառ չունին այլ եւս Օսմանեան Տէրութեան այս առանձնաշնորհեալ նահանգին ներքին վարչութեան վերաբերեալ գործոց միջամտելու: Ցիրաւի, կայսերական հրովարտակներով Եգիպտոսի Խտիվին տրուած առանձնաշնորհմունք յիշեալ նահանգին ներքին վարչութիւնը կը հաստատեն, և Բարձր. Թէվֆիգ փաշային յայս պաշտօն կոչման ատեն հանուած կայսերական հրովարտակին մէկ տրամադրութիւնք բացորոշապէս կ'ըսէ թէ Խտիվութիւնն որ եւ է պատրուակով կամ շարժառիթով չի կրնար մասամբ կամ ամբողջովին այլոց թողուլ Եգիպտոսի տրուած առանձնաշնորհումները, կամ երկրին մի մասը:»

Նախագահը (լորտ Կրանվիլ) շնորհակալութիւն յայտնեց Մուսուրուս փաշային՝ իր տուած աջակցութեան համար, և փափաք յայտնեց դիտողութիւն մ'ընելու Ն. փոխմալթեան վերջին խօսքերուն վրայ, վերաբերմամբ Եգիպտոսի առանձնաշնորհեալ և ինքնօրէն վիճակին: Լորտ Կրանվիլ կը կարծէ թէ չի կրնար ժխտուիլ որ եւրոպական Տէրութիւնք պատուութիւն ունին խորհուրդներ տալու Եգիպտոսի գործոց վրայ, և թէ այս բան կրնայ կատարուիլ առանց վիրաւորելու Վեհ. Սուլթանին ընդունուած իրաւունքներ բ:

Մուսուրուս փաշա կը պնդէ թէ Եգիպտոսի ելեւմտից, քաղաքային վարչութեան կամ հողային ամբողջութեան մասին փոփոխում չի կրնար լինել առանց հաւանութեան Բ. Դրան: Կարելի է խորհուրդներ տալ. բայց երկու կողմեր կան խնդրոյն մէջ. մին կը պատկանի վեհապետական իշխանութեան, և միւսն այն Տէրութեանց որք եգիպտական խնդրոյն կարգադրման մասնակցած են: Եգիպտոսի վրայ Տէրութեանց միջեւ որ և է համաձայնութիւն վաւերական չէ առանց հաւանութեան Բ. Դրան: Ինք կ'ընդունի թէ Տէրութիւնք կարծիք կը յայտնեն և խորհուրդ կու տան, բայց չեն կրնար աւելի առաջ երթալ: Պ. Վաթթինկթոն Եգիպտոսի չէզոքացման վրայ խօսեցաւ, (որ անգլօ-ֆրանսական համաձայնութեան կէտերէն մին էր:) Չէզոքացումն եգիպտական խնդրոյ քաղաքական մէկ կէտն է: Բ. Դուռը կոչուած չէ իր կարծիքն յայտնելու Անգլիոյ և Ֆրանսայի միջեւ փոխանակեալ ծանուցագրոց վրայ. բայց որովհետեւ Պ. Վաթթինկթոն ակնարկութիւն ըրաւ այս չէզոքացման խնդրոյն, կը պարտիմ յայտարարել թէ Բ. Դուռն այնպէս կը հասկնայ թէ չէզոքացման խորհրդովը երկու կառավարութիւնք կ'ուզեն օտար զօրաց արգիլել Եգիպտոսի մուտքն, և ո՛չ թէ [illegible] Տէրութեան այս նահանգին վրայ Բ. Դրան վեհապետական իրաւանց: Ուստի, այս կէտի, որպէս նաև Սուէզի ջրանցքին վերաբերեալ առաջարկութեանց վրայ, Բ. Դուռը կը վերապահէ իր գործողութեան և գնահատման լիակատար ազատութիւնը:

Քարոլի կոմսը կ'ըսէ.

«Եգիպտական խնդրոյ քաղաքական կողմին վրայ Թուրքիոյ պաշտօնակցիս դիտողութիւնները լսելով, կը պարտաւորիմ յայտարարել թէ իմ կառավարութիւնս, — առանց բնաւ կարծիք յայտնելու Անգլիոյ և Ֆրանսայի միջեւ գոյացեալ քաղաքական կարգադրութեան վրայ, որ արդէն դուրս է ներկայ խորհրդակցութեանց սահմանէն, — կը ճանչէ Բ. Դրան բոլոր իրաւունքներն, որք դաշնագրերէն և հրովարտակներէն ծագում կ'առնուն Եգիպտոսի նկատմամբ:»

Նիկրա կոմսը նոյն իմաստով կը խօսի, և կը յայտարարէ թէ Իտալիա բնաւ չէ ընդունած որ վնաս հասնի Վեհ. Սուլթանին իրաւանց յԵգիպտոս, ինչպէս ծագում կ'առնուն դաշնագրերէն:

Մինսթըր կոմս և Պարոն դը Սթաալ յանուն իրենց կառավարութեանց կը հաւանին աւստրօ-հունգարական և իտալական լիազօրներուն յայտարարութեանց:

Լորտ Կրանվիլ կը յայտարարէ թէ կը փափաքի անվթար պահել բոլոր այն խոստումներ զորս անգլ. կառավարութիւնը տուած է Օսմ. կառավարութեան:

Պ. Վաթթինկթոն նոյն իմաստով կը խօսի:

Մուսուրուս փաշա կը յայտարարէ.

«Կայսերական կառավարութիւնն, հաւանելով մասնակցիլ Դեսպանախորհրդոյն որ կոչուած է խորհրդակցիլ եգիպտական ելեւմտից վրայ, այնպէս հասկցած է թէ այս Դեսպանախորհրդոյ ո՛չ մէկ որոշումը չի կրնար այնպիսի հանգամանք մ'ունենալ որ Վեհ. Սուլթանին Եգիպտոսի վրայ վեհապետական իրաւանց վնաս հասցնէ, կամ եգիպտական խնդրոյ քաղաքական կողմերն ուղղակի կամ անուղղակի նախադատէ:»

Նախագահին առաջարկութեամբ, Դեսպանախորհուրդը կը սկսի զբաղիլ Անգլիոյ և Ֆրանսայի ելմտական բարեփոխեալ առաջարկութեանց քննութեամբ:

Դեսպանախորհրդոյ Ատենագրութիւններէն ուրիշ կարեւոր քաղուածներ ալ առաջիկայ թիւերով պիտի ընենք:

## ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

—o—

ՌՈՒՍԻԱ. Նովոյէ Վրեմիա լրագիրը կ'ըսէ թէ ռուս կառավարութիւնը վերջերս մեծ հոգ կը տանի իր նաւային զօրութիւնն աւելցընելու: Պալդիկ ծովու նաւատորմին նոր ֆրէկաթ մը աւելցուցած է Տէմիթրի Տօնսքոյ անուամբ, և շինել կուտայ մեծ զրահաւոր մը, Ադմիրալ Նախիմով անուն, որ տարին մը կ'աւարտի, և որուն համար չորս միլիոն րուպլ սահմանուած է: Սեւ ծովու նաւատորմին համար ալ կը շինուին Եկատերինա և Չեշմէ զրահաւոր մարտանաւք, որոց շինութիւնը մեծ փութով առաջ կը տարուի, և տարի մը պատրաստ պիտի լինին: Ռուսական շոգենաւուց ընկերութիւնն ալ իր Սեւաստոպոլի նաւարանին մէջ զրահաւոր մը շինութեան ձեռնարկեր է, որ [illegible] պիտի կոչէ: Եկատերինա զրահաւորին շինութիւնն աւարտելուն պէս պատերազմական շոգենաւ մը շինել պիտի ձեռնարկուի: Սեւ ծովու նաւատորմին համար պիտի շինուին նաեւ լրաբեր շոգենաւեր, որոցմէ քանի մը հատ արդէն կան: Նովոյէ կը յարէ թէ անկարելի է չուրախանալ Սեւ ծովու նաւատորմին աճման և զօրացման վրայ, որովհետեւ այդ ծով քաղաքական տեսակէտով մեծ կարեւորութիւն ունի:

ՀՐԷԱՅՔ Ի ՌՈՒՍԻԱ. Տփղիսի Քավքազ ռուս թերթին մէջ կը կարդանք. Յուլիս 9ին Աժտէրխանի Հրեայք իրենց ժողովարանին գումարուելով, բարեմաղթութիւններ ըրին Նիժնի Նովկորոտի ռուս Մետրապոլիտ Մաքարիի կենաց համար, որ վերջերս Հրէից դէմ եղած հալածմանց ատեն ազդու յորդորներ և խրատներ տուած էր, որպէս զի ռուս ժողովուրդն իր հրեայ համաքաղաքացիներն հարստահարելէ ետ կենայ: Հրեայք որոշեր են Մաքարիի առ Քրիստոնեայս ուղղած սոյն յորդորներն հին եբրայեցերէնի թարգմանելով մագաղաթի վրայ գրել և իրենց Սինակոկայի մէջ կախել: Այս ռուս Մետրապոլիտ իմաստուն և անձնուէր կրօնաւոր մ'է, մեծ գործեր ունի, և ջերմ համակրանք կը վայելէ ռուս ժողովրդեան կողմէ:

ՄԻՍԻՈՆԱՐՔ Ի ՄԱԴԱԳԱՍԿԱՐ. Ֆրանսացիք կը գանգատին թէ Մատակասքար գտնուող անգլիացի Միսիոնարք, Տէրոջը գործը մի կողմ թողած, քաղաքականութեամբ կը պարապին: Մատակասքարի արշաւանքին համար Պ. Ժ. Ֆէրրիի նախարարութեան խնդրած վարկը քննելու պաշտօն ունեցող խորհրդարանական յանձնաժողովն ինչ ինչ կարեւոր թուղթեր ձեռք անցուցեր է, որք կ'ապացուցանեն թէ Մատակասքարի անգլիացի Միսիոնարք Հովայ ժողովուրդը շարունակ Ֆրանսացւոց դէմ կը գրգռեն, և պատերազմական ոգին կ'արծարծեն, փոխանակ խաղաղութեան և հաշտութեան առաքեալի նուիրական դերը կատարելու: Միսիոնարք Հովաները կը գրգռեն եղեր անգլիական կառավարութենէն օգնութիւն խնդրելու, և մանաւանդ բրիտանական հովանաւորութիւն հայցելու:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՍԻԱ. Ինչպէս յառաջագոյն անգլիական լրագիրք ծանուցած էին, կը լսենք թէ այս օրերս Թէհրանէն Պետրպուրկ կ'երթայ արտասովոր Դեսպանութիւն մը, ընդ առաջնորդութեամբ մեծ [illegible] Եահեա խանի, եղբայր նախորդ Նախարարապետին, և այս Դեսպանութեան պաշտօնն է Ռուսիոյ գահաժառանգ իշխանին մատուցանել Արեգական և Առիւծի պատուանշանը, զոր կ'ընծայէ Պարսկաց Շահը:

Այս [illegible] մասնաւոր նշանակութիւն կը ստանայ հիմա որ Պարսկաստանի մէջ յիշխանութիւն կոչուած է ռուսական դաշնակցութեան բարեկամ Մեծ-Եպարքոս մը: Հաւանական է որ յիշեալ Դեսպանութիւնը պաշտօն ունենայ նաեւ դաշնադիր մը կնքելու: Կը կարծուի թէ այս դաշնակցութիւն ռուսօ-պարսկական սահմանագլխոց խնդիրներուն կը վերաբերի:

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամասիայէն մասնաւոր հեռագրով մը լուր տրուած է, թէ երկուշաբթի երեկոյ ժամը 1ին ատեններն վախճանեցաւ Տ. Յովհաննէս եպիսկոպոս Եդեսեան:

Երէկ գրած էինք, թէ Երուսաղիմայ պարտուց բարձման ի նպաստ հանգանակութեան խնդիրն առաջիկայ ուրբաթ օրը Ազգային Ժողովոյ մատուցանել կարելի չպիտի լինի, Ելմտական պաշտօնատունէն խնդրուած տեղեկութիւնք դեռ առնուած չլինելուն համար: Ըստ վերջին տեղեկութեանց, Ազգային Ժողովոյ յաջորդ նստին ալ մատուցանել կարելի չպիտի լինի, որովհետեւ Ելմտական պաշտօնատունը առձեռն չունի Պատրիարքարանի ուզած տեղեկութիւններն, և թէպէտ հեռագրով ուզած է գաւառներէն, բայց դարձեալ քանի մը շաբաթու ժամանակի պէտք կայ: Պատրիարքարանի ուզած տեղեկութիւններն են, թէ ո՛ր նահանգին մէջ քանի՛ լուսաւորչական Հայք և ո՛րչափ զինուորական տուրք կը վճարեն: Քանի մը նահանգներէն այս ծանօթութիւնք հասեր են Ելմտական պաշտօնատունը, և դեռ չպատասխանողներուն հեռագրուեր է փութացնել:

Քաղաքական Ժողովն երէկ Մաղասեան Վսեմ. Սիմոն պէյի ատենապետութեամբ ըրաւ շաբաթական նիստը, և յարաբերական և այլ խնդիրներէ զատ՝ որոց թիւը քանի չափ է, հետեւեալ որոշումներն ալ արտադրեց:

1.— Քաղաքական ժողովս իմանալով, որ Պօյաճի գիւղի թաղական խորհուրդն՝ հակառակ քանիցս ազդարարութեանց Պատրիարքարանի՝ ցարդ յանձնած չէ գիւղին եկեղեցւոյն շինութեան ի նպաստ Ներկայացեալ թատերախաղին հասոյթն և դիտողութիւններ կ'ընէ եկեղեցւոյն շէնքին վրայ, որոշեց գրել առ թաղական խորհուրդն և 7 օր պայմանաժամ տալ՝ նախ նոյն գումարը յանձնելու, և եթէ դիտողութիւններ ունի՝ ապա մատուցանելու համար, իսկ եթէ դարձեալ անսաստէ խորհուրդը, լուծել զայն:

2.— Անցեալներս Պէհէմնէն ի Պատրիարքարան հեռագրուած էր, թէ տեղւոյն եկեղեցպանոց մէկն ի վաճառ հանած է եկեղեցական սնօթոց մէկ մասն, և ազգային Վարչութեան կողմանէ Տէրունեան Արժ. Տ. Մաղաքիա Ծ. վարդապետի գրուած էր՝ երթալ քննել և տեղեկագրել: Արդ՝ յիշեալ վարդապետէն տեղեկագիր մը հասած լինելով՝ Քաղ. ժողովն երէկ տեսաւ զայն, և տեղեկանալով որ Պէհէմնիի մէջ մինչեւ ցարդ սահմանադրապէս Թաղ. խորհուրդ ընտրուած չլինելով եկեղեցպանութեան հին դրութեամբ կը վարուին, և Տ. Մաղաքիա վարդապետ ըստ Սահմանադրութեան ընտրել տուեր է թաղական խորհուրդ մը, վաւերացոյց և որոշեց գրել առ յիշեալ վարդապետն, որ վերադառնայ ի պաշտօնատեղին:

3.— Կինճի գաւառակէն, Վանէն, Բղլէն և Մուշէն նորատոյն դէպքեր ծանուցուած, և մասնաւորապէս Սիւլէյման ու Օսման պէյերու համար ծանր գանգատներ ի Պատրիարքարան հասած լինելով, Քաղաքական ժողովն երէկ ինչ ինչ տնօրինութիւններ ըրաւ՝ ասոնց դարման տանելու համար:

4.— Տիվրիկի ազգայինք բազմաթիւ խնդրագրովք բողոք բարձած լինելով, թէ իրենց Նորակառոյց վարժարանը թշնամական դիտմամբ այրեցուցեր ըրած են, և միանգամայն վարժարանին վերաշինութիւնը խնդրած լինելով, Քաղաքական ժողովն՝ ըստ եզրակացութեան տեղեկագրի Ուսումնական խորհրդոյ՝ պատշաճ դատեց խնդրել Բ. Դրնէն, որ Պէյ-պազարի հրդեհէն վնասեալ կարօտելոց ի նպաստ հանգանակութեան գումարէն բաժին մը հանուի յիշեալ վարժարանին վերաշինութեան համար:

Էքսբրէս լրագիր մը կը յիշատակէ թէ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն իր անձնական տկարութիւնը դարմանելու համար Վիեննա պիտի երթայ բժշկաց խորհրդով, և թէ ճանբայ պիտի ելնէ առողջական վիճակը ներելուն պէս:

Սամաթիոյ Ս. Սահակեան և Ն. Վարդուհեան վարժարանաց տարեկան հարցաքննութիւնք սկսան երէկ և պիտի տեւեն մինչեւ յառաջիկայ հինգշաբթի, 9 օգոստոս, բաց ի կիրակիէն: Հոգաբարձութիւնը կը հրաւիրէ ազգայինն՝ իրենց բարեյօժար ներկայութեամբ քաջալերել երկսեռ ուսանողները:

Երուսաղիմայ Միաբան Գեր. Տ. Երեմիա եպիսկոպոս՝ Ս. Յարութեան տաճարին մէջ վարդապետ ձեռնադրեր է երեք աւագ սարկաւագ:

Կիմանամք թէ Միացեալ Ընկերութեանց 1884-85 տարւոյ շրջանի ընդհանուր տեղեկագիրը պատրաստուելու վրայ է և հրատարակութեան պիտի տրուի քիչ օրէն: Կարեւոր ընդարձակ տեղեկութիւններ պիտի պարունակէ ընկերութեան վարժարանաց վիճակին և հաշուոց վրայ:

Ազգային Ժողովոյ Ը րդ նիստն տեղի պիտի ունենայ ամսոյս 3ին Ուրբաթ օրն ի Ս. Լուսաւորիչ Եկեղեցի Ղալաթիոյ:

Ատեանը պիտի բացուի առաւօտեան ժամը 2ին և գոցուի 5ին:

Հրաւիրեալ են Ազգային Երեսփոխանք իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ:

Մնամ աղօթարար
ի դիմաց Ս. Պատրիարք Հօր
Փոխանորդ Նորին

31 Յուլիս 1884

### ՕՐԱԿԱՐԳ

Ա. Ատենական գործողութիւնք.

Բ. Խնդիր Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման — Տեղեկագիր Վարչութեան (շարունակ.):

Գ. Շարունակութիւն վիճաբանութեան ի վերայ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵԼՄՏԱՑՈՅՑԻ:

Դ. Առաջարկութիւն Խառն Ժողովոյ Ազգ. Վարչութեան ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ նկատմամբ:

Ե. Ընտրութիւն Դիւ. Ատենադպրի Մայր Դիւանի:

Ատենադպիր
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՇԱԿՈՒՆԻ

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովոյ

Կրօն. Ժողովս որոշած է, յառաջիկայ օգոստոս 12էն սկսեալ իւր առաջին գումարման մէջ հանրական, և յաջորդ գումարման մէջ մասնական և անհատական խնդրովք զբաղիլ և շարունակել այսպէս յաջորդաբար:

Կրօն. Ժողովս պատշաճ կը համարի իւր այս որոշումն Ազգ. լրագրաց միջոցաւ հրատարակել ի գիտութիւն մերազնէից:

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ագչէհիրի (Գոնիայի նահանգ) Գայմագամ անուանեցաւ՝ Նէնիշէհիրի նախորդ Գայմագամ Ալի Րիզա էֆէնտի:

Մարզուանու Գայմագամ կարգեցաւ՝ Ալնայ նախորդ Գայմագամ Հաֆըզ Պէքիր էֆէնտի:

Իւլայի երկրորդ աստիճան տրուեցաւ՝ հաշուակալ փաստաբան Ձիպրայիլ Կարիպը էֆէնտիի:

Օսմանիյէ ականակուռ պատուանշան տրուեցաւ՝ դատական Նախարար Հասան Ֆեհմի փաշայի:

Կ'ըսուի, թէ Տարտանէլի հրամանատարութեան պաշտօնը՝ ամիրալութեանց Միրիլիվա Ահմէտ փաշայի պիտի յանձնուի:

Մէհմէտ Փէհլիվան անուն աւազակապետին 40ի չափ արբանեկաց 33ը ձերբակալուեր են վերջին օրերս, և մնացելոց ալ հետամուտ է ոստիկանութիւնը, կ'ըսէ Թէրճիմանը-Հագիգաթ:

Նախընթաց երեկոյ Եըլտըզի պալատան մէջ շքեղ կոչունք մը տրուեցաւ ի պատիւ Միջերկրականի Իտալական Նաւատորմին հրամանատար Աքթոն ծովակալին: Սեղանակից էին Քորթի կոմսն ու Իտալական դեսպանատան գլխաւոր պաշտօնատարք, Աիօսթինօ Բարպարիկօ մարտանաւուն սպայք, կայսերական իշխանազունք, Բարձր. Մեծ Եպարքոսն, Նախարարք և քաղաքային ու զինուորական բարձրաստիճան պաշտօնատարք: Ճաշի ժամանակ, կայսերական նուագածուաց խումբն ընտիր կտորներ կը նուագէր պալատան պարտիզին մէջ:

Սեղանէն յետոյ, Վեհ. Սուլթանն իր ներկայութեան ընդունեց Աքթոն ծովակալն, ապա ունկնդրութիւն շնորհեց Քորթի կոմսին: Վեհ. Սուլթանն սիրամեծար ընդունելութիւն մ'ըրաւ իր հիւրերուն, և Մէճիտիյէ պատուանշանին մեծ ժապաւէնն ընծայեց ծովակալին: Այլ և այլ կարգի պատուանշաններ տրուեցան նաեւ ծովակալին սպայից:

Հրաւիրեալք գիշերուան ժամը 4ին [illegible] Իտալական դեսպանատունը վերադարձան ի Թերապիա:

Հաւալէ ունեցող վաճառականաց ու սեղանաւորաց կողմանէ 50ի չափ անձինք նախընթաց օրը Բ. Դուռն երթալով, Հաւալէի խնդրոյն վրայ Մեծ Եպարքոսին աղերսագիր մատուցեր են: Նորին բարձրութիւնն անոնց մէջէն երկու հոգի կոչել տալով ծանուցեր է թէ Ելմտական պաշտօնատունն ի նկատ առած է իրենց խնդիրն, թէ պարտին զգուշանալ բազմութեամբ դիմելէ, որ անպատշաճ է և կրնայ վնասել իրենց խնդրոյն, և թէ կրնան երթալ Ելմտական պաշտօնատունը, և տեղեկութիւն առնուլ, առանց իրեն և այլուր դիմելու այսուհետեւ:

Երէկ Ղալաթիա վաճառականք ժողով գումարեցին այս խնդրոյն վրայ, սակայն դեռ չկրցանք իմանալ արդիւնքը:

Վեհ. Սուլթանը բարեհաճեր է 150 Օսմ. ոսկի նուիրել Կէլիպօլուի Րիւշտիէ վարժարանին:

Առողջապահական միջազգային խորհրդոյ չորեքշաբթի աւուր նստին մէջ, որուն մասնակցեցան օտար պատուիրակք, ինչպէս ծանուցինք երէկ, այս վերջիններէն միոյն կողմէ ուղղեալ հարցման մը վրայ, Նախագահն պաշտօնապէս յայտարարեր է թէ Օսմանեան 7 նոր անդամոց յաւելումը տեղի չպիտի ունենայ: Այս յայտարարութեան վրայ օտար պատուիրակք միաձայնութեամբ փափագ յայտներ են որ բարձուին նաեւ վերջին ժամանակներս ձեռք առնուած մի քանի առողջապահական միջոցներ, որոց կարեւորութիւնը տարակուսելի [illegible] է:

Պատուիրակք յայտներ են միանգամայն թէ պարտք կը համարին իրենց աջակցիլ այն ամեն միջոցներուն, որք անհրաժեշտ են Օսմ. երկիրը քոլերայէն զերծ պահելու համար:

Դատական Նախարար Հասան Ֆէհմի փաշա յատուկ շրջաբերականաւ մայրաքաղաքիս և գաւառաց դատարանաց նախագահներու ուշադրութիւնն հրաւիրած է թէ վճռագիրք շատ անգամ ուշ կը ստորագրուին և այս յապաղումէն դատին տէրերը կը վնասին. Հետեւաբար հրաւէր կը կարդայ որ այս անկանոն դրութեան վերջ մը տրուի:

Մուտանիայէն ի Պրուսա երկաթուղւոյ մը հաստատութեան մենաշնորհն առնալու համար, բազմաթիւ խնդրարկուք կը ներկայանան. բայց Կայս. կառավարութեան կողմէ առաջարկեալ պայմանաց մէջ կէտ մը կայ որ չընդունուիր, այն է այդ երկաթուղւոյ համար յառաջագոյն առնուած երկաթներն, կառքերն ու գործիները գնելու ստիպումն: Հանրօգուտ շինութեանց նախարարն ըմբռնելով թէ նոյն իսկ ի շահ կառավարութեան պէտք է բառնալ այս դժուարութիւնն, տեղեկագրով մը արտօնութիւն խնդրած է Բ. Դրնէն յիշեալ պայմանը ջնջել:

Թարիգ ստոյգ աղբիւրէ կը տեղեկանայ, թէ Նախարարաց խորհուրդը վաւերացուցեր է Ռուսիոյ վճարելի պատերազմական տուգանաց կարգադրութեան համար առեւտրական Նախարարին կողմէ պատրաստեալ ծրագիրն, և հրաման տրուեր է վճարել անցեալ պարտուց մնացորդ գումարն:

Յիշեալ ծրագիրը կ'առաջարկէ չըվճարել առ այժմ այն արմտիքն որոց տասանորդն յատկացեալ է պատերազմական տուգանաց վճարման, այլ ուրիշ տեղէ առնելով վճարել 200,000 ոսկւոյ բացը և սպասել որ արմտիք հետզհետէ վաճառին յարմար գներով և կարելի լինի հասոյթը միւս վճարմանց յատկացնել:

Սելանիկի նախորդ կուսակալ Հասան Թահսին փաշայի, կեդրոնական նախորդ կառավարիչ Բէչատ պէյի և վարչական ժողովոյ անդամ Իպրահիմ ու Համտի պէյերու դատաստանը՝ երէկ պետական խորհրդոյ դատական ճիւղին մէջ տեսնուեցաւ երրորդ անգամ, հրապարակաւ, բայց դարձեալ չվերջացաւ:

Այսօր Թարիգ լրագրէն կիմանամք թէ լրագրական վերատեսչութիւնը պատուիրած է լրագրաց՝ չգրել Միտիլլի կառավարչի խնդրոյն վրայ, մինչեւ ցվախճան քննութեանց: Այսպիսի պատուէր մը մինչեւ ցայսօր հասած չէ մեզ:

Երէկ գրեցինք Ռոտոսթոյի Անգղիական հիւպատոսին որդւոյն արձակման լուրն: Էտիրնէի կուսակալութենէն ստացուած հեռագիր մը՝ զոր հրատարակած են այսօր թուրք լրագիրք, կիմացնէ թէ աւազակք նկատելով, որ իրենց ապաստանարանն եղող Աղճա լեռը շրջապատեալ է զօրաց ու [illegible] կողմանէ, ահաբեկեալ և տղայն ողջամբ յանձներ են Միրլիվա Մէհմէտ փաշայի, և իրենք գիշերային մթութիւնը պատեհ առիթ համարելով լեռան ստորոտն իջեր են, սակայն չկըրնալով դիմադրել զօրաց՝ դարձեալ խոյս տուեր են անտառին խորերն, որ արդ ամեն կողմանէ պաշարուած է, և մեծ աշալրջութեամբ փոյթ կը տարուի զանոնք ողջ կամ սպաննեալ ձերբակալելու համար: Ազատեալ պատանւոյն հայրն ու ազգականք, յորոց 6-7000 լիրա կը պահանջէին աւազակք, իրենց որդեկին՝ առանց դանկ մը վճարուելու այսպէս ազատելուն համար շնորհակալեաց հեռագիր ուղղեր են կայսերական պալատը:

Թուրքիոյ երերուն պարտուց յարգարման համար ելմտական պաշտօնատան մէջ կազմեալ յանձնաժողովն այս նպատակաւ գաւառներէն խնդրած բոլոր տեղեկութիւններն ստացած և ուսումնասիրած լինելով, իր աշխատութիւնները գրեթէ աւարտած է: Յանձնաժողովն այս օրերս վերջին նիստ մ'ընելով, տեղեկագիրը պիտի պատրաստէ և ստորագրէ, Բ. Դրան մատուցանելու համար:

Սանաայի գաւառական լրագիրը կ'ըսէ թէ հռչակաւոր ապստամբապետ Շէրէֆէտտին, Զաֆիրի և Հաճալի գաւառակաց տիրելէ յետոյ, հետամուտ է այժմ անապատին շուրջը, Եէմէնի սահմանագլխուն վրայ Մէտուրի, Աքարի և Պէլասի Սուաքի երկիրներուն վրայ եւս յարձակիլ: Այս նպատակաւ, հազարի չափ կուսակցաց գլուխ անցած, սահմանագլխոյ ամրոցը պաշարեր է, բայց ամրոցին մէջ գտնուող օսմանեան զօրքերն յաջողեր են ցրուել և հալածել զանոնք:

Ասիրի կառավարիչն ալ ծանուցած է Եէմէնի կուսակալին թէ Վային-Ալիղ ցեղէն երեք չէյխեր որք ցարդ ապըստամբած էին տեղական իշխանութեան դէմ, հնազանդութիւն յայտներ են: Կառավարիչն առաջարկեր է թոշակ մը յատկացնել այս չէյխերուն և մինչեւ որ իր առաջարկն ընդունուի, 100,000 ղրուշի փոխատուութիւն մ'ըրեր է կառավարական սնտուկէն:

Պոլսոյ քաղաքապետան 150 ձմերուկ ղրկեր է՝ կեդրոնական բանտի մէջ գտնուող աղքատիկ անձանց համար:

Ի նպաստ Չարշամպայի հրկիզելոց Տրապիզոնի և Ճանիկի մէջ ցարդ 27,334 ղրուշ հաւաքուեր և ղրկուեր է հրկիզելոց:

Առաջիկայ երկուշաբթի օրը, Աւստրիոյ կայսեր գահակալութեան տարեդարձին առթիւ, մայրաքաղաքիս աւստրիական դեսպանը խնճոյք պիտի տայ աւստրիական հպատակ երեւելեաց, և երեկոյին պարահանդէս, ուր հրաւիրեալ են այժմէն Նախարարաց և բարձրաստիճան պաշտօնատարաց բազումք: Նոյն օրն, ըստ սովորութեան, թնդանօթք պիտի արձակուին Օսմանեան պահականաւէն, և կայսերական պալատան ու Բ. Դրան կողմանէ պաշտօնակալը դեսպանատունը պիտի երթան ի շնորհաւորութիւն:

Թէրճիմանը-Հագիգաթ ծանուցանելով այսօր՝ Միխալիճէն և ամեն կողմերէ ոչխար մայրաքաղաքս բերուիլը, կը խնդրէ որ քաղաքապետութիւնն այլ եւս յուղղութիւն ածէ մսավաճառներն, և մսի գնոց բարձրութիւնը տակաւին չտիրէ:

Կղզիներն երթեւեկող շոգենաւուց անկանոնութեան ու յամրընթացութեան դէմ բողոքելու համար, երէկ Իտարէի-Մախսուսէի վերատեսչին գացող պատգամաւորութիւնը՝ որոյ վրայ ծանօթութիւն տուած էինք երէկ, գոհացուցիչ կարգադրութեան մը պատճառ եղեր է: Վերատեսչին հրամանաւ երկու ընտիր շոգենաւ երեկ երեկոյ սկըսան երթեւեկել՝ մէկը Մեծ կղզի, և միւսն՝ Հէյպէլի: Սոյն պատգամաւորութեան անդամք յորդորեր են նախընթաց օրը առանց տոմսի անցնող ուղեւորներն՝ վճարել փոխարէնը:

Փիլիպէի Հիլալ լրագիրը կը պատմէ, թէ օգոստոս 11ին, Ռուսաց ի Շիփքա մտնելուն տարեդարձն լինելով, քաղաքին մէջ յանձնաժողով մը կազմուած է և հանդէսի համար պատրաստութիւն կը տեսնուի, և թէ՝ անցեալ շաբթու Էսկի-Զաղրայի օսմանեան զօրաց կողմանէ ետ առնուելու տարեդարձին առթիւ, յիշեալ քաղաքին մէջ Պուլկարք խանութները գոցեցին և սուգ առին, և կառավարական պաշտօնատունն գոցելով՝ դրան վրայ սեւ դրօշակ բարձրացաւ ի նշան սգոյ:

Սելանիկէն առ Թէրճիմանը-Հագիգաթ ուղղեալ մասնաւոր նամակներ սոսկալի կռիւ մը կը պատմեն, որ [illegible] ծխախոտի դէտերու և ծխախոտ փախցնողներու մէջ, որ ծխախոտ փախցնելու համար քանի մը տարիէ հետէ կազմակերպեալ ընկերութեան մը կը վերաբերին եղեր: «Քաղաքիս Նախուտի-պազարը ըսուած տեղը, կ'ըսէ նամակաց մէկն, Հրէայ ծխավաճառի մը խանութը կոխող դէտերուն վրայ յարձակեցան բազմաթիւ Հրեայք կացիններով, սակրերով և փայտերով և այլ այսպիսեօք. մեծ կռիւ մը ծագեցաւ. քանի մը հոգի սպանուեցան, և բազումք վիրաւորեցան. Հրեայք անյայտ ըրած են դէտ մը և ոստիկան մը, որոնք դեռ երեւան հանուած չեն. անմեղ կին մը վիրաւորուեցաւ, գաւազանի ուժգին հարուած մը ոստիկանի մը ուղեղն թափած, աչքերը սորեցուցած, ու լեզուն դուրս ցցած է, կարծես, թէ աշխարհի կատարածի օրն էր:»

Երուսաղէմէն լուրեր.

«Յուլիս 3ին լրացաւ Եղեռնական ատեանի անդամոց ընտրութիւնը. քուէից առաւելութեամբ Խալտի զատէ Եուսուֆ Զիա էֆէնտի և Թոտորի էֆէնտի Պարամքի անդամ ընտրուեցան, որով և յիշեալ ատեանը գործել սկսաւ: Չորս օր յետոյ Դամասկոս գտնուող Ատլիյէյի Մուֆեթթիշէն հեռագրով եկած հրամանին համեմատ պաշտօնանկ եղաւ նոյն ատեանին նախագահ Հիլմի պէյը:

«Ամսոյս 5ին տեղւոյս Յունաց Պատրիարք Տ. Նիկոդիմոս սրբազանը ի Սամարիա և ի Գալիլիա մեկնեցաւ, նոյն կողմերու եկեղեցիներն և դպրոցներն այցելելու համար:

«Ամսոյս 10ին Յոպպէ հասաւ Ֆրանսական Վինիւս անուն մարտանաւն, որոյ նաւաստեաց թիւն է 380, իսկ թնդանօթաց 16: Սոյն նաւոյն հրամանատար փոխ ծովակալն պարոն Բօնըը մէկ քանի պաշտօնէից հետ տեղս ժամանեց, ուր 3 օր կենալէն յետոյ Յոպպէ վերադարձաւ:

«Ամսոյս 12ին երեկոյեան ժամը 12ին, 12 տարեկան Հրեայ տղայ մը քարիւղի ճրագը պատրաստելու ժամանակ քարիւղն պայթելով սենեակին նիւթերն այրել կ'սկըսին, ինչպէս նաեւ տղուն հանդերձներն. տղան չկրնալով դուրս փախչիլ պատուհանին կը մօտենայ, փողոցը գտնուող ժողովուրդը խորհուրդ կուտայ տղուն ինքզինքը պատուհանէն վար նետել, խոստանալով զինքը գրկել, իսկ նա չանսար այս խորհրդոյն և երբ կրակը կը սաստկանայ և մարմինն այրել կսկսի անմիջապէս պատուհանէն վար կը ձգէ ինքզինքը: Բժշկի դարմանին հակառակ 6 ժամէն կը մեռնի:

Ադրիանուպոլսէն կը գրեն թէ տեղւոյն նորակառոյց հիւանդանոցի բացումը կատարուեր է մեծ հանդիսիւ, ի ներկայութեան կուսակալին, քաղաքային և զինուորական պաշտօնատարաց և խուռն բազմութեան ։ Հիւանդանոցին յարակից ուրիշ շէնք մ'ալ պիտի կառուցուի, 50 անկողնով և իգական սեռի յատկացեալ ։

Աթէնքի հաշուական ատենի նախագահ Պ. Սիւլթանիչ որ ամսէ մը հետէ մայրաքաղաքս կը գտնուէր, երէկ ուղեւորեցաւ ի պաշտօնատեղին ։ Պ. Սիւլթանիչ մեկնելէ առաջ Բ. Դուռն երթալով, հրաժեշտի ողջոյնը մատոյց Մեծ Եպարքոսին, և Ներքին ու արտաքին գործոց նախարարաց ։

Հելլենական կառավարութիւնը Ս. Փրկչի պատուանշանին մեծ ժապաւէնն ընծայեր է Պ. Մավրոկորտադոյի, և Թեսաղիոյ երկաթուղւոյ քանի մը գըլխաւոր երկրաչափաց և պաշտօնատարաց ։

——

Եւրոպական լրագրաց ոմանց թըղթակիցք սուտ ու սխալ տեղեկութիւններ կը հաղորդեն Թղթատարական խնդրոյն վրայ ։ Ի մէջ այլոց, յուլիս 20 ի Տէյպի մէջ սա հատուածը կը տեսնուի .

«Վերջերս մեծ դրամատուն մը 6000 Ֆրանքի թղթադրամ պարունակող նամակ մը կը յանձնէ Օսմ. Թղթատարութեան, ապահովագրելով զայն ։ Նամակը կը կորսուի և նամակատէրն ստակը տիրոջը վճարելէ յետոյ, տուած գումարը կը պահանջէ ։ — «Ստակ չունինք, կը պատասխանեն, բայց առանց պայմանաժամի փոխանակագիր մը կուտանք քեզ» ։ — Խեղճ մարդն հարկադրեցաւ [illegible] երթալ գալ, մինչեւ որ ստակը գանձեց ։

Յայտնի է թէ օսմ. Թղթատարութիւնը արժէքն յայտնի նամակ կընդունի ոչ թէ վեց ամսէ ի վեր, այլ օգոստոսի սկիզբէն, հետեւաբար Տէյպի թղթակցին այս զրոյցն ինքնին կը հերքուի ։

——

Երկու տարի առաջ կայսերական կառավարութիւնն հրովարտակաւ արտօնութիւն տուած էր Սուրիոյ բնիկ երեւելիներէն կազմեալ ընկերութեան մը, այդ քաղաքէն մինչեւ Ճէսէր-Մէճամաա բռնած տեղը երկաթուղի մը շինել ։ Արտօնատէրք մինչեւ ցարդ գործի ձեռնարկած չլինելով, հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը Թօրհանէի մէջ կազմեալ վերին յանձնաժողովոյ դիմելով, խնդրեր է որ ընկերութեան կողմէ օսմ. կայսերական պանքան իբր աւանդ թողեալ 2,000 [illegible] յանձնուի ։ Յանձնաժողովը Բ. Դրան և ընկերութեան միջեւ կնքեալ պայմանագիրը քննելով, յիշեալ նախարարութեան պահանջն օրինաւոր գտեր և ըստ այնմ վճռեր է ։

Կը յիշուի թէ քանի մը շաբաթ առաջ Գատը գիւղի Թաղապետութիւնը բռնութեամբ փակել տուած էր Մազլըմեան Մկրտիչ էֆէնտիի կտաւի գործարանը ։ Մազլըմեան էֆէնտի՝ որ ռուսահպատակ է, բողոք բարձած Պոլսոյ առեւտրական առաջին ատենին և 400 ոսկի վնասուց հատուցում կը պահանջէ ։ Դատը պիտի սկսի այս շաբաթ օր ։ Կ'ըսուի միւս կողմէ թէ Ռուսիոյ հիւպատոսարանն հատուցում պիտի պահանջէ բնակարանի բռնաբարման համար և միանգամայն գործարանին վերբացումը ։

——

Ադրիականէն Կ. Պոլիս եկող շոգենաւք իրենց քարանթինային մէկ մասը Քորֆուի առջեւ կը կատարեն, այնպէս որ երբ Պիրէոն կը հասնին, հնգօրեայ քարանթինային երկուքն արդէն լրացուցած են ։ Անդ շոգենաւը Սալամինի ծովախորշը կը մտնէ ուր ուղեւորք ազատ են ըստ հաճոյս կամ նաւուն մէջ սպասել կամ մաքրանոցը երթալ ։ Աւստրիական շոգենաւուց մէջ մընդեան և բնակութեան համար օրական կը վճարուի մէկ անգլիական ոսկի ․ իրաւ է թէ փոքր ինչ սուղ է, բայց ուղեւորք ամեն դիւրութիւն և հանգստութիւն կը վայելեն եղեր շոգենաւուն մէջ, մաքուր անկողին, ընտիր սեղան, օշարակներ և այլն, մինչդեռ ցամաքի վրայ, չորս պատի մէջ, դժուար կը լինի կանոնաւոր սնունդ և անկողին գտնել և այն ալ սուղ գներով ։

Կ. Պոլսոյ Քաղաքապետութիւնն իմանալով որ Մեծ-Կղզւոյ կառապանք և իշապանք երթեւեկութեան համար իրենց ուզածին չափ վարձ կը պահանջեն և այս պատճառաւ նեղութիւն կը կրեն չքաւոր հիւանդք, հրամայեր է կղզւոյն Գայմագամին՝ երթեւեկութեան վարձուց քանակութիւնը սահմանել ։

Խասքէօյի կողմը Գայմագամ Շիւքրի պէյի 5-6 տարեկան զաւակին տանը ջրհորին շուրջը խաղացած ատեն, մէջն ինկեր է գլխուածով, և թէպէտ հասեր հաներ են ողջամբ, սակայն 5 ժամ յետոյ մեռեր է ։ Ջրհորին բերանը բաց է եղեր ։ Ահաւասիկ ծնողաց համար՝ զգուշութեան ծանր ու ազդու դաս մ'ալ ։

Երկու օր առաջ Ղալաթիա Սէրայի ոստիկանութեան տեղեկագրէն առնլով մայրաքաղաքիս թերթերը ծանուցին թէ Բերա, Աղաճամի Ծխավաճառ Գօվնայի խանութէն 100 ոսկի գողցողը Փրանսացի Շարլը անուն մարմնամարզի դաստատու մ'է ։

Իրաւ է թէ ոստիկան մը Շարլը Մուսաբու անուն մարդ մը բռնած էր, բայց ըստուգուելով որ պատուաւոր մէկն է, անմիջապէս թողուեր է ։ Ֆրանսական դեսպանատունը պահանջած է Բերայի կառավարչէն որ հրատարակութեամբ ուղղուի ոստիկանութեան տեղեկագրին այս սխալ ծանօթութիւնն ։

——

Երեքշաբթի օրը, ցերեկ ժամանակ Մալթացի մը Ղալաթիոյ Վօյվօտայի մօտակայ փողոցէ մը անցած պահուն, երեք հոգի վրան յարձակելով, մին դանակ մը դրեր է վզին, միւսը բռնցի հարուած մը տուեր է դէմքին և երրորդը ձեռները կապեր է ․ այս կերպով յաջողեր են ժամացոյցը և գրպանի ստակը կողոպտել ։ Բայց Մալթացին մօտակայ սրճարան մը երթալով, կ'երեւի թէ սպառնացեր է գողերը գտնել և սպաննել, ասոր վրայ փոքր տղայ մը ժամացոյցը բերեր յանձներ է, սակայն ստակը մնացեր է չարագործաց քով ։

——

Նոյն երեկոյին Ղալաթիա պահակի մը վրայ երկու հոգի յարձակելով, վրան գըտնուած 10 ոսկին յափշտակեր են ․ ասոնցմէ մին բռնուեր է ։

Թէվֆիգ պէյ անուն մեքենագործ մը յայտներ է հանրօգուտ շինութեանց նախարարութեան թէ Ոսկեղջիւրի շոգենաւուց կամուրջէն անցած ժամանակ ո՛ և է վտանգի առաջքն առնելու համար մեքենայ մը հնարած է ։ Թէվֆիգ պէյ իր այս գիւտին համար արտօնագիր կը խնդրէ, միանգամայն շոգենաւուց վրայ փոքր տուրք մը դընելու իրաւունք ։ Խնդիրը ձեռնհաս յանձնաժողովոյ մը քննութեան յղուած է ։

Ադրիանուպոլսոյ հողագործք հնձոց ժամանակ գործաւորի նեղութիւն չկրելու համար, 35 հատ հնձող մեքենայ բերել տըւած են, որոց իւրաքանչիւրը, զոյգ մը եզով, 30-40 գործաւորի գործ կը կատարէ ։ Նոյնպէս գաւառին երկրագործական վարժարանն բաւական թուով յանձնարարած է այս մեքենայներէն իւր տիպար ագարակին համար ։

Շաբթուս երկրաշարժի զօրաւոր ցնցումներ տեղի ունեցեր են Իզմիրի մէջ և Գասթամունիի այլեւայլ կողմերը ։

Կէլիպօլուի կառավարչին կողմէ [illegible] տեսչութեան ուղղեալ հեռագիր մը կը հերքէ Նէօլօղօսի այն լուր թէ աւազակք Պէշանի մօտերը գիւղ մը կոխելով, երեք երեւելի բռներ լեռը տարեր են ։ Հեռագիրը կը յաւելու թէ այդ կողմերն ապահովութիւն կը տիրէ և աւազակութեան դէպքեր չեն պատահած ։

Իզմիրէն կը գրեն մեզ .

—Երկուշաբթի երեկոյ Տիւսայի նաւահանգիստին մէջ նաւային ընդհարում մը տեղի ունեցաւ ․ Համիտիէ ընկերութեան Իզմիր անուն շոգենաւն Գօրտէլիօէն գալով իւր ճամբորդները պարպելէ յետոյ դէպ ի ետ շարժում մը կընէ և ուժգին կերպով կ'ընդհարի Ծօյի-Վիքթօրիա ընկերութեանը Կեռ Բէյէ անուն շոգենաւին, որ նոր եկած էր Գարա-Թաշէն և եօթանասունի չափ ճամբորդ կպարունակէր, որք սարսափահար կլինին այս յանկարծական բաղխումէն. բարեբաղդաբար անձի վնաս չկայ ․ Կեռ Բէյէ նաւն երեսուն ոսկւոյ վնաս մը կրած է ։

—Մի քանի շաբաթէ ի վեր Զմիւռնիոյ ծովախորշը խարսխող իտալական հինգ զրահաւորներէն չորսը անցեալ չորեքշաբթի մեկնեցան դէպի Սէլանիկ, ուսկից պիտի երթան յԻտալիա ․ հինգերորդը Բէնէտէթօ Բրին [illegible] քանի մ'օր ևս մնալով, երկուշաբթի օր մեկնեցաւ դէպ ի յունական արշիպեղագոսի ջուրերը ։

—Ամսոյս 16 էն ի վեր տեղւոյս պատժական ատենին առջեւ կը դատուի հանրածանօթ աւազակապետ Գարգան Անտրէա ․ ատեանին կնախագահէ Ապտիւլ Ղաֆար էֆէնտի, ներկայք Մանիսայի միւթէսարըֆ Սուրուրի էֆէնտի, Ընդհ. դատախազ Մարգար էֆէնտի և այլ պաշտօնեայք ․ օտար հիւպատոսաց թարգմանք և բազմաթիւ ունկնդիրք ներկայ կգտնուին այս հետաքրքրաշարժ դատին ։ Ցարդ եղած քննութիւններէն և յայտնութիւններէն կ'հաստատուի թէ՝ հակառակ իւր ուրացման՝ նոյն ինքն է Գարգան Անդրէան այն որ սպաննեց պայտարգի երիտասարդ վաճառականը, առեւանգեց Գարաօրլիի որդին և այլ բազմաթիւ չարագործութեանց հեղինակ հանդիսացաւ ։ Տեղւոյս լրագիրք իրենց ամեն թիւերով կհրատարակեն այս հետաքրքիր դատին նկարագրութիւնը ։

—Հինգշաբթի օր, երեկոյեան ժամը 10 ին միջոցները սպանութեան փորձ մը տեղի ունեցաւ ի Պուճա՝ Բէժիի գործակալներէն միոյն անձին վրայ ։ Այս սպանութեան փորձին պարագաները սապէս կպատմուին ։

Սպանութեան նախընթաց օրն յիշեալ գործաւորը նոյն գիւղին շրջակաները գացած էր արձանագրելու համար այն տուներ յորս գիւղացիք ծխախոտ տնկած էին ։ Մինչդեռ Բէժիի գործակալը իւր քննութիւնը կ'կատարէր, գիւղացի մը մօտենալով անոր կ'աղաչէ որ արձանագրութեան տետրին մէջ իւր արտը նուազ մակերեւոյթով նշանակուի քան որչափ ցանուած էր ։ Սակայն գործակալը կմերժէ գիւղացւոյն առաջարկութիւնը և իրարմէ կը բաժնուին ։

Գիշերը գիւղացին՝ դժգոհ այս մերժման վրայ՝ իւր երկու բարեկամաց հետ գործակալին տունը կմտնէ, ուր այս վերջինը առանձին կմնակէր, հետեւաբար ամենափոքր ընդդիմութիւն մը ընել անկարելի էր իրեն ։ Գիւղացին դանակի երկու հարուած կուտայ գործակալին և կփախչի ։ Խեղճ գործակալին կեանքը վտանգի մէջ է այժմ ։

Պուճայի ոստիկանութիւնը թէեւ մարդասպանը գտած չէ, բայց ձերբակալած է նորա հայրը, եղբայրը և հօրեղբայրը և ընդ հսկողութեամբ ոստիկանաց Իզմիր ղրկած է ։

—Քաղաքիս զբօսասէր հասարակութիւնը իւր կիրակնօրեայ զուարճութեան եռանդը երբեմն անխոհեմ ծայրայեղութեան կը տանի և կը տուժէ՝ եթէ ոչ միշտ կենաց վտանգով՝ մեծ «կորուստով» ։ Կիրակի օր Քարա-Թաշի նաւամատոյց կամուրջը, որ արդէն խախուտ էր, շոգենաւին մէջ տեղ բռնելու եռանդով վազող բազմութեան բեռան տակ կը ճնշուի և կը փլի ․ բարեբաղդաբար ծովին խորութիւնը մեծ չըլլալով՝ աղէտալի հետեւանք մը չունենար այս արկած ։ Գորտէլիօէն եկող շոգենաւ մը Իզմիրի նաւամատոյցին մէջ իւր ճամբորդները պարպելու միջոցին՝ օրիորդ մը աճապարանօք դուրս ելնելու եռանդով ոտքը կը սահի և ծովը կիյնայ ․ թէև մարմինը կը հանեն, բայց դժբաղդաբար խեղդուած ։ Հայ կին մ'ալ շոգենաւուն տախտակամածին վըրայէն ծով կը նետուի, բայց անմիջապէս նաւաստիք կը յաջողին ազատել ․ կ'ըսուի թէ այս կին յիմարութիւն ունի և դիտմամբ ծով ինկած է ։

—Հինգշաբթի գիշեր, որ յունաց Ս. Պանդալէոնի տօնն էր ՚ի Կեօզ-Թէփէ արբեալ գիւղացիներու և քաղաքացիներու մէջ կռիւ մը կը ծագի ․ [illegible] մին ծանրապէս կը վիրաւորի դաշոյնի հարուածով մը, բայց հարուածը տուողը՝ վիրաւորելոյն ընկերաց կողմէն արդէն կիսամահ վիճակի ենթարկուած կը ձերբակալուի ոստիկանութեան կողմէն ։

—Ուրբաթ իրիկուն նոյնպէս կռիւ մը կը ծագի Ֆրանսական հիւանդանոցին ետեւի փողոցին մէջ և սպանութեամբ մը կը վերջանայ ․ Սպանեալը՝ որ իւր տունը փոխադրուած էր ողբալի վիճակի մէջ, դաշոյնի ութ հարուած ստացած էր, որոց երեքը մահացու ․ Վիրաւորեալը հակառակ ոստիկանութեան պաշտօնէի մը թախանձագին հարցման՝ ոճրագործին անունը չէ յայտնած, որով սա ժամանակ ունեցած է խոյս տալու ։

—Հինգշաբթի իրիկուն Մատամա խանին ետեւ [illegible] կոչուած փողոցին մէջ ատաղձագործի մը խանութէն հրդեհ ծագելով ամբողջ շէնքը այրեցաւ, որ Գուլին ընկերութեան կողմէն ապահովագրուած էր ․ եղած վնասը 600 ոսկւոյ չափ կը հաշուի ։

—Չորեքշաբթի օր տեղւոյս բանտարկեալներէն 60 հոգի յորոց ոմանք տասն և հինգ և ոմանք մշտնջենական բանի աշխատութեան դատապարտուած էին, Օսմանեան Սէլամէթ անուն շոգենաւով Ափրիկեան Տրիպոլիս տարուեցան ։ Այս դատապարտելոց մէջ կը գտնուին նշանաւոր աւազակապետներ ։

# ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ
(Այս օրուան)

## ՓԱԿՈՒՄ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՅ

Վերսայլ, 13 օգոստոս

Վեհաժողովը՝ ներկայացեալ բոլոր բարեփոխիչ առաջարկները մերժելէ յետոյ, 172 դէմ 509 ձայնիւ ընդունեց Սահմանադրութեան վերաքննութեան կառավարական ծրագիրն ։

Վեհաժողովը փակեցաւ ։

## ԽՈԼԵՐԱ

Մարսիլիա, 13 օգոստ. երեկոյ

Այսօր 12 հոգի մեռան քոլերայէն ։

Թուլոն, 13 օգոստ. երեկոյ

Այսօր 2 հոգի մեռաւ քոլերայէն ։

# ԴՐԱՄԱԿԱՆ

## ԳԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 2 Օգոստոս

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

| | | | |
|---|---|---|---|
| 3 ամիս | Լոնտրայի վրայ | (պանքայի) | 110 ½ |
| 3 » | » | » (վաճառականի) | 110 ⅛ |
| 3 » | Բարիզի | » (պանքայի) | 22 82½ |
| 3 » | » | » (վաճառականի) | 22 90 |

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսօլիտէ

| | | |
|---|---|---|
| Երէկ երեկոյ գոցուեցաւ | դհկն. | 8 39 |
| Պորսային գոցուելէն վերջը | » | 8 38½ |
| Երէկ Բերայի մէջ | » | — — |
| Այսօր առտու բացուեցաւ | » | 8 37½ |
| Բարձրագոյն գին | » | 8 38 |
| Նուազագոյն | » | 8 37½ |
| Կէս օրին | » | 8 38 |
| Փոխառութիւն 1863 | Ֆր. | 56 |
| » 1865 | » | 52 |
| » 1869 | » | 46 |
| » 1873 | » | 41 |
| Պօն տիւ թրէզօր | Անգլ. Լ.ր. | 47 50 |
| Ռումէլիի երկաթուղի | Ֆր. | 45 50 |
| Օպլիկասիոն տը Բրիօրիթէ | » | 367 |
| Բաժնեթուղթ Լաւրիօնի | » | 82 |

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

| | | |
|---|---|---|
| Սօսիէթէ ժէնէրալ | Անգլ. Լ.ր. | 3 27 |
| Քրէտի ժէնէրալ (Գ. Կ.) | Օսմ. Լ.ր. | 6 32 |
| Պանք տը Գոնս | » | 5 25 |
| Սօս. Շանժ է վալէօր | Օսմ. Լ.ր. | 3 25 |
| Թրամուէյ | » » | 295 |
| Իւնիֆիէ Եգիպտական | | 66 17 [illegible] |
| Երէկ իրիկուն գոցուեցաւ | | 67 5 |
| Գիշերը գործ չեղաւ | | — — |
| Այս առտու բացուեցաւ | | 66 25 |
| Կէս օրին նոյն գին | | 66 25 |

Ընթացք դրամոց

| | | |
|---|---|---|
| Օսմանեան ոսկի | ղրշ. | 100 |
| 20 Ֆրանքնոց | » | 87 27 |
| Անգլիական ոսկի | » | 110 7 |
| Քրիմից | » | 51 15 |
| Բօլ Իմբէրիալ | » | 90 10 |
| Ռուպլի Թղթադրամ | » | 8 94 |
| » արծաթ | » | 90 |
| Ֆիօրին | » | 9 2 |
| Մէճ. արծ. (տարբ.) | » | 108 6 |
| Հինգնոց | » | 102 10 |
| Մէթալիք | » | 98 20 |
| Պղինձ | » | 800 |
| Թղթադրամ | » | 2800 |
| Վեցնոց | » | 102 32 |

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 13 Օգոստոս ժամ 5 վայր. 15 երեկոյ

| | |
|---|---|
| Անգլ. քօնսօլիտէ գոցուեցաւ | 100 11/16 |
| Օսմ. » բացուեցաւ | 8 1/16 |
| » » գոցուեցաւ | 8 ⅛ |
| Օսմ. փոխառութիւն 1865 | 10 ¼ |
| » » 1869 | 9 ¼ |
| » » 1871 | 66 ¼ |
| » » 1872 | 47 |
| » » 1873 | 8 ¼ |
| Փոխառութիւն 1877 | 78 ¼ |
| Պանք Օթօման | 13 ⅜ |
| Ռուսական փոխառ. 73 (գ. կ.) | 91 ⅜ |
| Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ) | 59 ⅞ |
| » առանձն. (բրիվիլէժիէ) | 83 |
| Տայրա Սանիէ | 58 ½ |
| Տօմանիալ (փոխառ. Րօչիլտ) | 81 ½ |
| Հունգարական պարտաթուղթ 1877 | 101 ¼ |
| Փոխանակութիւն Բարիզի վրայ | — — |

Վիեննա, 13 Օգոստոս ժամ 4 երեկոյ

| | |
|---|---|
| Փոխանակութիւն Լոնտոնի վրայ | 121 85 |
| Օսմանեան երկաթուղի | 21 50 |

Բարիզ, 13 Օգոստոս ժամ 3 վայր. 45 երեկոյ

| | |
|---|---|
| Ֆրանսական Ռանթ 4 ½ % բաց | 107 82½ |
| » » 3 % բաց | 78 75 |
| Օսմանեան քօնսօլիտէ բացուեցաւ | 8 07½ |
| » » գոցու. (գ. կ.) | 8 12½ |
| Օսմանեան փոխառութիւն 1863 | — |
| » » 1865 | — |
| » » 1869 | — |
| » » 1873 | — |
| Օսմանեան երկաթուղի | 45 |
| » Բէժիի բաժնեթուղթք | 521 25 |
| Պանք Օթօման | 593 75 |
| Գրէտի Լիօնէ | — — |
| » Ֆօնսիէ | 1290 |
| Բաժնետոմս Լիօնի (գուբ. կտր.) | 1237 50 |
| Սուէզի ջրանցք | 1886 25 |
| [illegible] 1877 | 97 |
| Իտալական Ռանթ (բարձրացած) | 95 65 |
| Արեւելեան Ռուս. (Ռիւս Օրիան.) | — |
| Եգիպտական միացեալ գոց (իջած) | 302 50 |
| Սպանիական (արտաքին) | 60 |
| Բրիօրիթէ Թիւրք | — |
| 5 % Հելլենական | 347 50 |
| Չէք Լոնտրայի վրայ | 25 20 |

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԶՄԻՒՌՆԻՈՅ

Սեպտ. 1893—1884 Յուլս.

—o—

Գեր. Տ. Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս,
Սրբազան Նախագահ Ազգ. ժողովոյ .

Ինչպէս յայտնի է, Ուսումն. Խորհրդոյ պաշտօնն՝ ըստ Սահմանադրութեան՝ երկու տարի կը տեւէ, և սակայն ահա այսօր խորհուրդս իր պաշտօնավարութեան չորրորդ տարւոյն Տեղեկագիրը կը մատուցանէ Ձեր Սրբազնութեան և Ձեզմով Պատ. Գաւ. ժողովոյ ։

Եթէ Ուսումն. Խորհուրդս յանձն առաւ՝ կրկնակի հրաժարականներ տալէն ետք՝ երկու տարի ևս շարունակել իր պաշտօնն, որուն մէջ իր անձեռնհասութիւնը կը ճանչէր, պատճառն ոչ այնքան վերընտրելիութեան սահմանադրական տրամադրութիւնն էր, որուն վրայ Ձեր Սրբազնութիւնն և Պատ. Գաւ. ժողովը կը պնդէր, որքան այն յոյսն ու վստահութիւնն թէ Ձեր և Վարչութեան աջակցութիւնը պիտի վայելէր, ինչպէս նաև այն նկատմունքն թէ արժան էր իր պաշտօնավարութեան ընթացքին մէջ սկսուած կրթական մի քանի տնօրէնութիւններ և մանաւանդ Հախիխեան վարժարանի շինութեան գործն աւարտած տեսնելէ և բացման հանդէսը կատարելէ ետեւ հրաժարիլ և տեղի տալ զանազան անպատեհութեանց՝ որոց մին էր Այնի հոգաբարձու Տիկնանց հրաժարելու դիտաւորութիւնն Ուսումն. խորհրդոյ հետ ։

Ուստի այս նկատումները զօրաւոր գըրգիռներ եղան չմերժել Ձեր հրաւէրն, և ուրախ է Խորհուրդս որ իր ակնկալութիւններն և ազգային կրթութեան գործին իւրովանն մատուցած ծառայութիւնն ի դերև և ապարդիւն չելան ։

Խորհուրդս սոյն Տեղեկագիրն հիմնած է իր Ատենագրութեանց և Տեսչութեան կողմէ տրուած տեղեկութեանց վրայ, իսկ դիւրիմացութեան համար զայն մի քանի մասերու բաժնեց, այնպէս որ, ա) Ներքին կարգադրութեանց, բ) Ուսմանց ծրագրի, գ) [illegible], դ) Թեմական յարաբերութեանց, ե) Վարժարանաց վիճակին, զ) Քննութեանց, է) Նուիրատուութեանց և մի քանի կարեւոր նորոգումներու վրայ համառօտ խօսելէ ետեւ՝ իր պաշտօնավարութեան քառամեայ շրջանին վրայ ընդհանուր ակնարկ մը պիտի ձգէ և Տեղեկագիրը պիտի աւարտէ ։

1. Ներքին կարգադրութիւնք.—Արդիւնաւոր պաշտօնավարութեան գլխաւոր պայմանը պատասխանատուութեան սկզբունքը լինելով՝ Խորհուրդս այդ սկզբունքն ուզեց յարգել և լոկ անուանական պաշտօն վարելէ զգուշանալ, որպէս զի նիւթական [illegible] համապատասխան արդիւնք յառաջ գայ և ազգային կրթութեան գործն անընդհատ շարունակուի ։ Ուստի, նոր շըրջանին վերստին գործի սկսաւ նոր եռանդով, և վարժարանաց բացմանէ առաջ Պատ. Տնտես. Խորհրդոյ ձեռօք կատարել տուաւ այն ամեն նիւթական նորոգութիւններն որ անհրաժեշտ էին թէ՛ վարժարանաց առողջապահական վիճակին և թէ՛ աշակերտաց կարգապահութեան ու մաքրութեան համար ։ Նոյնպէս որոշեց՝ իր նիւթական միջոցներու ներածին չափ՝ ուսման օժանդակ գործիներ, աշխարհացոյց, երկրագունտ, դասական գրեանք, բնական պատմութեան և իրաքանութեան վերաբերող նիւթեր ու պատկերներ բերել տալ Եւրոպայէն, և նկատողութեան առնլով դպրոցական պաշտօնէից վերահաստատութեան և ոմանց հրաժարման խնդիրն՝ մի քանի փոփոխութեանց հարկը տեսաւ ։ Հրաժարող Ֆրանսերէնի գլխաւոր դասատուին տեղ նոր մը կարգեց, ինչպէս նաև տաճիկ դասատուի օգնական տուաւ հայ տաճկագէտ դասատու մը, և Ձեր Սրբազնութեան տնօրէնութեամբ Կոստանդնուպոլսէն եկող ձայնաւոր դասատուին յանձնեց ձայնական երաժշտութեան պաշտօնն, ինչպէս նաև իր նախորդին ուսուցած առարկայից դասատուութիւնն, այն է՝ Սրբազան պատմութեան և Վայելչագրութեան ։ Տոմարակալութեան և առեւտրական թուաբանութեան համար յաջողակ դասատու մը գտաւ, որ՝ Ս. Մեսրոպեան վարժարանի վաղեմի ուսումնաւարտ աշակերտ՝ յօժարակամ յանձն առաւ շաբաթն երկու անգամ դասախօսել առանց ո՛ և է փոխարինութեան ։ Խորհուրդս Ս. Հախիխեան վարժարանի մէջ եւս մի քանի նոր հայ վարժուհիներ կարգեց՝ հրաժարելոց տեղ, և ձեռագործի ու գծագրութեան օտարազգի վարժուհւոյն յանձնեց նաև մի քանի դասարաններու Ֆրանսերէն դասախօսութիւնն, որպէս զի բոլոր օրն զբաղելով վարժարանի մէջ՝ առիթ ունենայ աշակերտուհիքն Ֆրանսերէն լեզուի խօսակցութեան վարժել և անոնց վրայ հսկել ։ Իսկ իբրեւ օգնական վարժուհիներ ընտրուեցան բարձրագոյն կարգի մի քանի աշակերտուհիներ, որք՝ առանց իրենց ուսմանց ընթացքը դադրեցնելու. յանձն առին հայերէնի, Ֆրանսերէնի, գեղագրութեան և գծագրութեան դասեր տալ՝ ըստ կարգադրութեան Տեսչութեան, Ծաղկոցի և Նախակրթարանի աշակերտուհեաց ։ Այս կարգադրութեամբ երկսեռ վարժարաններու դասատուաց և վարժուհեաց թիւն 20ի յանգեցաւ, ի բաց առեալ օգնական ձրի վարժուհիներն, որ թուով 4 են ։ Ասոնցմէ 6 գլխաւոր վարժուհիք, որոց 3ն միանգամայն հերթական պաշտօն կը վարէին, սահմանուած էին դասախօսել Հախիխեան վարժարանի 5 դասատուաց հետ, որ միանգամայն կը դասախօսէին Մեսրոպեան վարժարանի իրենց միւս պաշտօնակցաց հետ՝ որոնցմէ 3ն ունէին նաև վարիչի պաշտօն ։ Տարեկան արձակուրդէն ետք՝ Խորհուրդս՝ Կանոնագրի 50րդ յօդուածին համեմատ՝ որոշեալ դասատուներն հրաւիրեց 1883 Սեպտեմբեր 1ին ի պաշտօն, նոյնպէս ծանուցագրով վերակոչեց աշակերտներն ու աշակերտուհիներն, որ ազգային դիւանատունէն ընդունելութեան տոմսակներն և թոշակաւորներն իրենց նախորդ շրջանի թոշակը վճարելէն ետեւ՝ հետզհետէ ներկայացան ի վարժարանս, ուր դասարանափոխութիւններն՝ տարեկան և քննական վիճակացոյցներու համեմատ կատարուելով և հրապարակային քննութեանց ներկայ չգտնուող ուսանողներն յատուկ քննութեան ենթարկուելով՝ Տեսչութեան ձեռօք կանխաւ պատրաստուած ժամանակացոյցներու համաձայն, դասախօսութիւններն սկսան ։ Մեսրոպեան վարժարանի կարգերու կամ դասարաններու թիւն որ 7ի կը հասնին, պարունակելով Ուսումնարանի 3, Նախակրթարանի 3 և Ծաղկոցի 1 կարգն՝ ի բաց առեալ Ծաղկոցի 3 Նախապատրաստական կարգերն, փոփոխութիւն չկրեցին այս շըրջանին, ինչպէս նաև Հախիխեան վարժարանի 7 կարգերն, թէև Ուսում. Խորհուրդս մտադիր էր Մեսրոպեան Ուսումնարանի մէջ բարձրագոյն 4րդ կարգ մը կազմել, եթէ 3րդ կարգի աշակերտաց մեծ մասն դպրոցէն հրաժեշտ չտային՝ ոմանք շուկայ և մի քանի օտար վարժարան գնալու, իրենց ուսման ընթացքն ընդհատելով. ցաւալի անպատեհութիւն՝ որուն վրայ արդէն խօսուած և դարման մը գտնելու միջոցներուն վրայ Ազգային Վարչութեան ուշադրութիւնը հրաւիրուած է ։

2. Ուսմանց ծրագիրք.—Ուսումնական խորհուրդս իր պաշտօնավարութեան առաջին շրջանէն պատրաստած և Պատ. Գաւառական ժողովին կողմէ վաւերացած ուսմանց ծրագիրներն մեր ազգային վարժարանաց մէջ աւանդելի դաստիարակութեան և կրթութեան հիմ բռնած՝ շարունակեց այս վերջին շրջանին մէջ հսկել անոնց գործադրութեան, մերթ ընդ մերթ կարեւոր դատուած փոփոխութիւնները մուծանելով ։ Սոյն ծրագիրներն, որ երեք գլխաւոր մասի կը բաժնուին, 7-8 տարուան շրջանով, էապէս նախնական և մասամբ. միջնակարգ վարժարանաց ծրագիրներու վրայ շինուած են, և ո՛չ միայն մեր քաղաքին պիտոյից և նիւթական միջոցներուն կը համապատասխանեն, այլ և գործադրելիութեան հանգամանքն ունին և քառամեայ յարատեւ և արդիւնաւոր փորձերու առաւելութիւնն ։ Տարրական գիտելեաց ուսումէ զատ՝ ինչպէս հայերէն լեզուի, գրավարժութեան, գծագրութեան, իրաքանութեան, թուաբանութեան, աշխարհագրութեան, սրբազան և ազգային պատմութեան, ձայնական երաժշտութեան և մարմնամարզութեան, կ'աւանդուի բարձրագոյն դասարաններու՝ բայց ի այս ուսմունքէն՝ աւելի ընդարձակ կերպով, կրօնագիտութեան ու բարոյագիտութեան, ընդհանուր պատմութեան, բնական պատմութեան և բնագիտութեան հիմնական մասունքն ։ Եւ թէպէտ … կան ժողովրդեան մը համար բն… բարոյական գիտութեան ուսումն … քին անպէտս կը սեպուին ազնուորէն, … կայն անոնց յետին ծայր կարեւորութիւնը վաղուց հաստատուած է՝ իբրեւ մտաւորական զարգացման և լեզուագիտութեան անհրաժեշտ միջոցներ ։ Այդ ուսմանց հետ փոքր ի շատէ երկրաչափական և տարրաբանական ծանօթութեանց ուսման մեր ծրագիրներուն մէջ մուտ տալու պէտքն զգալի է, ժամանակիս և մանկավարժական պահանջմանց համեմատ ։ Ասկից զատ՝ քաղաքական և առեւտրական անտեսութեան, տոմարակալութեան եւ առողջապահութեան տարերքն, Ֆրանսերէն, Թուրքերէն, անգլիարէն լեզուներու հետ, ուսմունք որ անմիջական յարաբերութիւն ունին մեր ապրած միջավայրին և կենաց հետ, մեր ծրագրին ընդհանուր առարկաներն են ։ Վարժարանաց և ուսմանց դասակարգութեան տեղեակ անձինք միայն գիտեն թէ ի՛նչ պէտք է պահանջել նախնական, երկրորդական և բարձրագոյն դպրոցներէ, և ի՛նչ լիսէներէ և համալսարաններէ ։ Նախնական և միջնակարգ դպրոց մը չկրնար տալ ինչ որ իրաւացի է պահանջել բարձրագոյն կամ ճարտարգիտական կամ համալսարանական և այլն հաստատութենէ մը ։ Ժողովրդեան մանկավարժական ուսմանց և արդի գիտութեանց ընթացքին վրայ որոշ և ճշգրիտ գաղափարներ չունենալէ յառաջ եկած է այն շփոթութիւնն ու խառնակութիւնն, որ դեռ կը տիրէ մեր մի շատ ազգային կամ թաղական վարժարանաց մէջ, որ յատուկ դասակարգի բաժնուած չեն, որ իրենց գտնուած տեղւոյ և պիտոյից յարմար հաստատ հիմնագիր չունին, այլ գրեթէ բոլորն ալ լիսէներու, վարժապետանոցներու և համալսարաններու ձգտումներ և յաւակնութիւններ կը տածեն, առանց սակայն իրական ու յարատեւ արդիւնք յառաջ բերելու, եթէ ոչ թեթեւ, միամիտ ու ինքնահաւան համբակներ, որ իբրեւ գիտութեան անձնաւորութիւն կը ներկային մեզի, թէև անոնց կրթութեան համար մեծաքանակ գումարներ կը վատնուին աննպատակ և անծրագիր ազգային վարժարաններու մէջ ։

Ուսումն. Խորհուրդս իր երկար փորձառութեամբ կը համարձակի հաստատել, որ գոնէ մեր երկսեռ վարժարանները յատակագիծ մ'ունին, որու համեմատ կ'ընթանան և անստուգութեան ու ամլութեան դատապարտուած չեն ։ Սակայն այդ յատակագիծը տարուէ տարի ընդլայնելու փափաքն հիմնաւո՞ր է, Ահա՛ խնդիր մ'որ բոլորէս կը յուզուի, առանց լուծում մը գըտնելու ։ Վասն զի մեր վարժարանաց ուսմանց ընթացքը բարձրացնելու և նոր նոր առարկայից հետ նոր յառաջդիմութեան միջոցներ աւելցնելու փափաքն այնքան օրինաւոր պիտի լինէր, որքան օրինաւոր պիտի լինէր պահանջել որ մեր վարժարաններն իրենց նախնական ու միջնակարգ վիճակէն հանելով լիսէներու ու համալսարաններու աստիճանին հասցնենք, որքան բանաւոր պիտի լինէր պնդել թէ կրթութեան պիտոյից յատկացած գումարն պէտք է կրկնապատկել ու եռապատկել ։ Մէկ կողմէ կարեւոր գիտութեանց ուսումն իսկ մեր վարժարանաց մէջ աւելորդ համարիլ, միւս կողմէ տժգոհութիւն ցոյց տալ թէ՝ մեր վարժարաններն գրագէտներ ու գիտնականներ չեն արտադրեր՝ բոլորովին անհեթեթ դատողութեան հետեւանք է ։ Բայց եթէ ըսուի թէ կարելի է ուսմանց գործիներն ու գործողներն կատարելագործել հետզհետէ մեր նախնական և միջնակարգ դպրոցներուն մէջ, եթէ առարկուի թէ՝ ըստ կարի պէտք է հետեւիլ նոր մանկավարժական մեթոտներու և հրահանգներու, և ուսանողներն իրական կենաց պատրաստել, մշակելով անոնց մտային և բարոյական կարողութիւններն և այն ընկերութեան՝ որու մէջ պիտի ապրին՝ գործունեայ, ընտիր անդամներ լինելու ջանալ, այդ օրինաւոր դիտողութեան ոչ ոք կը համարձակի հակառակիլ, այս պայմանաւ որ խնդրուած աւելի ձեռնհաս մանկավարժներու, աւելի կատարելագործեալ գիտական միջոցներուն ու աւ մանաւանդ դրամական միջոցները ։ Եւ միթէ այդ [illegible] իրագործելու զօրութիւն չունի՞ Հայ ժողովուրդը ։ Անտարակոյս ունի, եթէ [illegible] ազգային արկղին վրայ յոյս ու վըստահութիւն չունի, և օտար վարժարաններն իբրեւ դաստիարակութեան և կրթութեան օրինակելի տիպարներ չնկատէ՝ իր ազգայնութեան և քսակին վնասուն ։ Ուսումն. Խորհուրդս չպարծիր որ մեր վարժարաններն՝ իրենց որոշեալ սահմանին ու տեսակին մէջ՝ այդպիսի տիպարներ են ․ սակայն վստահութեամբ կրնայ պնդել որ գոնէ ազգային դաստիարակութեան և կրթութեան հիմնական տարերքը կ'աւանդուին հոն, տարերք որ հետզհետէ կրնան մշակուիլ և արդիւնաւորիլ, կրթասէր անձերու օժանդակութեամբ և ազգային հաստատութեանց աւելի հանրային հոգատարութեամբ ։ Մեր վարժարաններն ունին ուսուցման մեթոտներ, որ ոչ լիովին գերմանական և ոչ հին աւանդական են, այլ գործնականութեան ամեն պայմաններն ունին ․ վերացական կերպով դասեր ու լոկ բառեր ուսուցանելու եղանակն բոլորովին վերցուած է, այն դաստիարակութեան սկզբանց համեմատ թէ ինչ որ աշակերտին համար անծանօթ է, անըմբռնելի է՝ անօգուտ է, թէ ծանօթէն անծանօթին և դըրականէն վերացականին հասնելու եղանակն ամենէն արդիւնաւորն է, և թէ կարեւոր է ի նկատի առնլով աշակերտին բնաւորութիւնն, հասակն ու մտային կարողութեան աստիճանն՝ կրթել զայն ուսմանց ասպարիզին մէջ և տարրական գիտութեանց ճաշակը ջամբել ։ Ահա՛ այս սկզբանց վրայ հրահանգներ տրուած են դասատուներու և վարժուհիներու, որք ջանացած են իւրաքանչիւր դասարանի յատուկ ծրագիրն ի գործ դնել կարելի եղածին չափ դիւրին և հասկնալի ոճով ։

(Շարունակելի)

## ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

| | | |
|---|---|---|
| Դրամագլուխ | 1,852,000 | Անգլ. Ոսկի |
| Պահեստի դրամ | 274,155 | » » |

LONDON AND LANCASHIRE

## ԼՈՆՏՕՆ ԵՒ ԼԱՆԳԱՇԱՅՐ

Սոյն ընկերութիւնն չափաւոր գիներով ամեն կարգի փոխադաւոր ապահովութիւնք կրնայ ընդունիլ, Բերայի, Ղալաթիոյ, Պոլսոյ և մօտակայ գիւղերու մէջ. գիներու և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուզողք պէտք է դիմեն առ

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ Ի ԹՈՒՐՔԻԱ
Ր. Ց. ՐԱՈՒԹ
Ղալաթիա, Հալաճեան խան 16—17
ԴԵՐ-ԳՈՐԾԱԿԱՏԱՐ
Յ. ԱՍԱՏՈՒՐ
Կ. Պոլիս, Կամուրջի գլուխ, Նէնի-ճամի 32

---

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԷՔԹՈՐ ՄԱԼՈՑ

## ԸՆՏԱՆԵԶՈՒՐԿ

ՎԷՊ ՍՐՏԱԳՐԱՒ ԵՒ ՀՐԱՀԱՆԳԻՉ
Պսակեալ ի ճեմարանէ Ֆրանսայի
Թարգմանութիւն Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆԻ
ՀԱՏՈՐ Բ.

Կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց քով, և Պահճէ գաբու ջրավաճառ Պօղոս և Յակոբ աղաներուն խանութները. գին 7½ ղրուշ:

Նոյն տեղերը կը վաճառուին նաև

| | ղրշ. |
|---|---|
| Սկզբունք Քաղաքական Տնտեսութեան | 6 |
| Կարմիր Մարդոց Երկրորդը 2 Հտ. | 12 |
| Ամուսնութեան Փորձեր | 6 |
| Մարքիզուհին | 7½ |
| Ծերերէ ի Լոնտոն | 7½ |

---

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

### ԳՐԱԿԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՃԱՌ

Տետր առաջին

Բովանդակութիւն. — Ողջոյն, Մարիամ, — Համառօտ պատմութիւն Բ. Տնտեսութեան. — Մայրիկն ու մանկիկ. — Կրթական շարժում (Ատենաբանութիւն Հայկական կրթարանի մէջ) — Սէրք իմ առ Հ. Ղևոնդ Ալիշան. — Ցաւակցութիւնք և ուրախակցութիւնք:

---

ՍԱՄՈՒԷԼ ՍՄԱՅԼՍ

### ԻՆՔՆՕԳՆՈՒԹԻՒՆ

Թարգմանութիւն
Ս. ԷԹՄԷՔՃԵԱՆ

Ընթերցողաց աւելի դիւրամատչելի ընելու համար այս անգամ սոյն գրքին գինը տասն ղրուշի իջեցուցած է թարգմանիչը: Կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց քով: Բ. տպագրութիւն:

---

### 1882 Ի ԳՈՄԼԷԹԸ

Այս հռչակաւոր փոշեայ ՍԻՆԱՐԻ ԹՈՒՂԹԸ իւր կատարեալ մաքրութեամբ արժանի է յանձնարարուիլ բոլոր ծխողներուն: Ոչ միայն Եւրոպիոյ այլ և այլ ակադեմիայք, այլ և Կ. Պոլսոյ բժշկական խորհուրդն, անցեալ մայիս 16ին, վկայագիր տուած է, ուսկից կը տեսնուի թէ, բուսական կամ հանքային ո՛ և է խառն նիւթ չպարունակեր և հետևաբար անոր գործածութիւնը կատարելապէս անվնաս է:

Այս թուղթը պատրաստուած է Ֆրանսայի Անկուլէմ գաւառին ԼԱՐՈՇ ԺՈՒՊԻՐ ընկերութեան համբաւաւոր գործարանին մէջ: Թուրքիոյ մէջ կը վաճառուի միմիայն Կալաթա, Ֆրանսական Սիթէ, թիւ 82, Զաքարիա Մաքանկիոտեսի վաճառատունը:

---

## ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԻՐԱՍՔԵՐԻ

Լեէրլի խմալը սիյահ վէ պէյազ վաքթա

Ալթիգ գըյէ իւչ պին սէքիզ եիւզ տօգսան եէտի.

Ճէտիտ գըյէ պէչ պին.

Պէհէր գըյէսի ճէտիտի եիկիրմի գուրուշտան.

Սիյահ Ֆրանսըզ Թէլաթինի

Ալթիգ գըյէ իքի պին իւչ եիւզ օթուզ սէքիզ.

Ճէտիտ գըյէ իւչ պին.

Պէհէր գըյէսի ճէտիտի օթուզ պէչ գուրուշտան.

Իւչիւնճիւ Օրտույի Հիւմայունա կէօնտէրիլմէք իւզրէ, իթթիխազ օլունան նիւմունէլէրինէ, վէ շուրութը մուգարրէրէսինէ թէվֆիգան միւպայեա օլունաճագ պալէտէ մուրագգամ իքի գալէմ վագթա իլէ թէլաթին ֆիյաթը մուրագգամալէրի իլէ թալիպի էօհտէսինտէ օլուպ, Աղօսթօսը րումինին ալթընճը բազար իրթէսի կիւնիւնէ դատար պէհէօ կիւն մինագասասը պիլ իճրա, մէզքիւր կիւնտէ գարարը գաթիյի վիրիլէճէկլիւտէն, իթա իխմէկէ թալիպ օլանլարըն վէ Աղօսթօսը րումինին եէտինճի սալը կիւնիւ եիւզսէ պէչ թէնզիլինէ բաղիպ պուլունանլարըն մագամը սէրասկերի լէվազըմաթը ուսումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր:

2—3

31 Թէմմուզ 1300

---

## ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԻՐԱՍՔԵՐԻ

Սպարթա վէ Պուրտուր վէ Սէմավ սանճագլարը.

Ատէտ իւչ պին, պիւթիւն եաղլը, պէհէր գըյէսի ճէտիտի գուրուշ օն սէքիզ.

Ատէտ օն իքի պին, եարըմ եաղլը, պէհէր գըյէսի ճէտիտի գուրուշ եիկիրմի պիր.

---

Նիզամիյէ սարաճխանէ անպարընա, մահֆուզ պուլունան նիւմունէլէրինէ վէ շուրութը մուգարրէրէսինէ թէվֆիգան միւպայեա օլունաճագ պէր վէճհը պալա իքի գալէմ սախթիյան ֆիյաթը մուրագգամասը իլէ թալիպի էօհտէսինտէ օլուպ, աղօսթօսը րումինին ալթընճը բազար իրթէսի կիւնիւնէ դատար պէհէր կիւն մինագասասը պիլ իճրա, մէզքիւր կիւնտէ գարարը գաթիյի վիրիլէճէկլիւտէն, իթա իխմէկէ թալիպ օլանլարըն, վէ օն պիրինճի ճիւմա կիւնիւ եիւզտէ պէչ թէնզիլինէ թալիպ պուլունանլարըն մագամը սէրասկերի լէվազըմաթը ուսումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր:

3—3

30 Թէմմուզ 1300

---

### ԱԶԴ

Կայսերական պալատան ատամնաբոյժ Տօքթ. Բավինարօրուլօ պատիւ ունի ծանուցանել իւր յաճախորդաց և պատուարժան հասարակութեան թէ Այնօրօզի վանքն ուխտաւորութենէն վերադարձած ըլլալով, հաստատուած է Բերա, մեծ փողոց, Պօն Մարշէի փողոցին ծայրը սուղի վերաբերեալ նիւթերինաց վաճառատան վերնայարկն, ուր բացի կիրակիէն ամեն օր հիւանդ կընդունի, առաւօտեան ժամն 8էն (եւրո) մինչև երեկոյեան ժամը 8:

---

### ՀԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՊԱՐԵՂԻՆԱՑ

Պոլսոյ—Բաղչէ Թագճը Քոչու Թիւ 59

Մելքոն էֆ. Տէօզմէճեանի վաճառատան մէջ կը գտնուին նպարեղինաց վերաբերեալ ամեն տեսակ ապրանքներ, որպիսիք են, խահվէ՝ սովորական, լաւ և ընտրպագոյն (մարթինիքա). շաքար՝ Մարսիլիոյ և Թրիեստէի. այլ և այլ տեսակ ըսպարմաչէթներէ զատ, Ֆրանսական բուն Ֆօրնիէ. Սիպիրի թարմ և ընտիր խաւ. Նաբոլիի մաքարոն. Ճէնովայի և Նաբոլիի չէհրիյէ. բրինձ՝ Մարսիլիոյ և Բիզօն. լուբիա և սիսեռն՝ եփուն և խոտ համեղ. անուշեղէնի և խմորեղէնի յատուկ լաւագոյն ալիւր. օսլայ (նիշասթէ) և արարօթ. Քանտիոյ և Այվալըքի ընտիր ձէթ. Լոնտոնի և Մարսիլիոյ քօլա. Ամերիկայի քարիւղ (կազ). Լոնտոնի ընտիր լեղակ (չիվիտ). քօնեաք և այլ ոգելից ըմպելիք. սօտա. թարմ ըմպելիք և սարտին. Այվալըքի ընտիր ձէթ. թարխանա և ալիւր. մէկ խօսքով, սոյն վաճառատան մէջ կը ծախուին ամեն տեսակ նարօռէնքը լաւագոյնն այն պիտանի բաներու, որք առևտրական սոյն ճիւղին կը վերաբերին գլխաւորապէս:

Ամեն յանձնարարութիւն կը կատարուի ուղղութեամբ և կանոնաւորապէս:

Գիները խիստ չափաւոր են: ԱՊԱՌԻԿ ՉԿԱՅ:

---

## ԲԺԻՇԿ ՃԱՆԻԿ ՔՐԻՍԵԱՆ

Հիւանդ կընդունի ամեն օր, Կիրակէ օրերն ալ, առաւօտէ մինչև կէս օր, Կ. Պոլիս, կամուրջի դէմ-առ-դէմ 77 թիւ Քիւչիւքեան Եղբարց դեղարանը:

Իրենց թաղերէ վկայեալ աղքատները ձրիաբար կընդունի:

---

## ՖՐԷՏ, ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք կանոնաւորապէս կը բանին Լիվըրբուլէ և Սեւ-Ծովի մէջ.

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Ալճէրիան | 2500 | Ֆավոնեան | 3700 |
| Ալզասիան | 2500 | Ֆլամինեան | 3700 |
| Անատոլեան | 2500 | Ֆլավիան | 3700 |
| Աթէնեան | 2500 | Իպէրիան | 5500 |
| Արապիան | 3700 | Իլլիրիան | 5500 |
| Պավարիան | 6000 | Իտրիան | 5500 |
| Պուլկարիան | 6000 | Լէսպիան | 2200 |
| Փաշթէլեան | 800 | Լիկուրեան | 2500 |
| Սարտինեան | 2000 | Լիսպոն | 800 |
| Տօրիք | 700 | Օբորթօ | 700 |
| Իճիբշըն | 3700 | Բերսիան | 3800 |
| Ֆապիան | 3700 | Վալէնսիան | 6800 |
| Ֆալէրնիան | 3700 | Վիրճինեան | 6800 |

Սըրպիան շոգ. Նաւապետ Բրիչարտ Օտեսայէն ասա վերադարձաւ և ամսոյս 19ին ուղղակի Լիվըրբուլ պիտի ուղեւորի:

Ֆլավիան շոգենաւը, նաւապետ Ուոմըսթըրոնկ ամսոյս 18ին Լիվըրբուլէն ասա կ'սպասուի:

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կընծայուի.

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՕՆԹԷՆ
Գործակալ
Թիւ 34, 35, 36, Եէնի Միւլքէ խան, Ղալաթիա.
Նաւատէրք, Պարոնայք Ֆրէտ, Լէյլանտ և ընկ. Լիվըրբուլ

Գործակալութիւնք

Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնթէն.
Ճիպրալթար, Պ. Պ. Բարվըր Եղբարք.
Աղեքսանդրիա, Կ. Լ. Վահման և ընկ.
Մալթա, Ա. Քամիլէրի.
Շիրա, Ա. Մ. Մավրօկորտատօ.
Զմիւռնիա, Պ. Ռէյտօլ և ընկ.

---

## ՔԻՒՆԱՐՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք ամիսը երկու անգամ կը բանին Լիվըրբուլէ և Միջերկրականի մէջ.

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Օրանիա | 7,000 | Մալթա | 3,000 |
| Աթլաս | 3,000 | Մորոքքօ | 2,500 |
| Ալէբբօ | 3,000 | Նամթ | 2,500 |
| Պոդնիա | 4,600 | Բաւոնիա | 5,000 |
| Պաթավիա | 3,800 | Պարթիա | 3,200 |
| Պալպէք | 2,500 | Բալմիրա | 3,000 |
| Պրիթիշ Քուին | 1,200 | Սերվիա | 7,800 |
| Սեֆալոնիա | 5,000 | Սքիթիա | 4,600 |
| Գալլիա | 4,700 | Սարակոսա | 3,000 |
| Շերպուրկ | 2,000 | Սամարիա | 3,000 |
| Տէմէրարա | 2,500 | Սիտոն | 3,000 |
| Կալլիա | 4,000 | Թարիֆա | 3,000 |
| Քէտար | 2,500 | Թրինիտատ | 2,500 |
| Մարաթոն | 3,000 | | |

Ալէբբօ շոգենաւը, նաւապետ Հայվըս, Լիվըրբուլէն ասա հասաւ ընդհանուր վաճառքով և ի մօտոյ Լիվըրբուլ պիտի ուղեւորի:

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՈՒԼԻ
Գործակատար
Թիւ 4 Քիւչիւք Հայվէ
փաշա խան Ղալաթիա

---

## ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրբուլէ և Միջերկրականի մէջ բանող շոգենաւք

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Քանոբուս | 4200 | Ոսիրիս | 3000 |
| Ֆարօս | 4000 | Նեֆթիս | 3000 |
| Օսմանլի | 4000 | Բեբօ | 3000 |
| Սեսոստրիս | 3250 | Ագրիգենթ | 1700 |
| Թեպէ | 3250 | Լոթուս | 800 |
| Մակարիա | 3250 | Օլինտա | 800 |
| Մարեօթիս | 3250 | Սէսիլ | 700 |

Բեբօ շոգ. Նաւապետ Ֆորէսթըր Օգոստոս 16ին շաբաթ օր ուղղակի Լիվըրբուլ պիտի ուղեւորի:

Օսմանլէ շոգ. Նաւապետ Ռեկլըբս, ի մօտոյ Լիվըրբուլ պիտի ուղեւորի:

Սեսոստրիս շոգ. օգոստ 25ին Լիվըրբուլէն ասա կ'սպասուի:

Վերոյիշեալ շոգենաւք չքեղապէս յարդարուած են ճամբորդներու համար

Դիմել առ Ժ. Թ. ՌՈՒԹՈԼ և ԸՆԿ.
Գործակատար
Մէյտանճըգ փողոց, Պոլիս
Տնօրէնութիւն, Լիվըրբուլ
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
31, Ճէյմս Սդրիդ, Լիվըրբուլ

---

## Ն. ՊԱՔԷ ԷՆԷ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մարսիլիոյ և Բերէի մէջ կանոնաւորապէս բանող

Տրապիզոն և Սամսոն երթալիք յառաջիկայ շոգենաւն է Լը Մէօզ, որ Յուլիս 30ին Մարսիլիայէն և Օգոստոս 17ին Պոլսէն պիտի մեկնի:

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Լը Մինգրէլի:

Ուղեւոր և ապրանք առնուի

Նաւուղեքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար
Դիմել առ գործակատարն
ԹԻՆԻՈԹԻ ԲԸՂՊՈՒԼ
Մահմուտ փաշա փողոց, թիւ 141

---

### ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ
Ընդ մէջ Անգլիոյ, Կ. Պոլսոյ և Օտեսայի

## ԹՈՎՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Ալպանօ | 2,000 | Լէբանդօ | 4,500 |
| Անճէլօ | 3,000 | Մարէնկօ | 4,300 |
| Արկօ | 1,300 | Մարտին | 2,500 |
| Պասսանօ | 3,500 | Միլօ | 2,000 |
| Պօրօտինօ | 2,200 | Նէրօ | 2,000 |
| Պրավօ | 2,000 | Օթելլօ | 5,000 |
| Գէլըր | 2,600 | Օրլանտօ | 3,000 |
| Գալիբսօ | 2,500 | Օգրանդօ | 4,500 |
| Գամէօ | 2,100 | Օգդօ | 2,000 |
| Գադօ | 2,000 | Բասիֆիք | 1,200 |
| Գօմօ | 2,700 | Բալէրմօ | 3,200 |
| Տիտօ | 2,500 | Բասդէր | 1,700 |
| Տօմինօ | 1,800 | Քինօ | 2,800 |
| Տրաքօ | 2,600 | Րիալթօ | 4,400 |
| Էրադօ | 2,600 | Րինալտօ | 3,200 |
| Ֆալքօն | 800 | Րօլլօ | 3,000 |
| Ֆլաւօ | 1,700 | Րօմանօ | 5,500 |
| Ֆլամինկօ | 1,600 | Րօմէօ | 3,500 |
| Կայիլէօ | 5,500 | Սալէրնօ | 4,000 |
| Կիդօնօ | 2,200 | Սարֆօ | 2,000 |
| Կօզօ | 1,800 | Սէլլիօ | 2,000 |
| Կրօմնօ | 2,200 | Սօրէնդօ | 4,300 |
| Համլէօ | | Թասսօ | 1,200 |
| Հէրօ | 2,000 | Թ. Ուիլսըն | 3,000 |
| Հիտալկօ | 3,000 | Թիկէր | 1,300 |
| Հիւմպէրդ | 1,200 | Թօլէտօ | 2,800 |
| Ճիսօ | 2,300 | Քասնդօ | 3,600 |
| Քէլօօ | 2,000 | Եէսօտօ | 3,600 |
| Քօմօօ | 2,200 | Զէպրա | 1,000 |
| Լէօ | 2,000 | Զէրօ | 140 |

Քօմօ շոգենաւն Անգլիայէն ասա հասաւ և իւր բեռն ասա պարպելէ յետոյ Օտեսա պիտի ուղեւորի:

Թելլօ շոգ. Նաւապետ Մոնրօ, Յուլիս 27ին Անգլիայէն մեկնեցաւ Մալթա, Իզմիր, Պոլիս և Օտեսա երթալու համար և Օգոստոս 14ին ասա կ'սպասուի:

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կընծայուի.

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ՖՐԷՏԷՐԻՔ ՀԻԼՏ
Գործակալ
Թիւ 17-18, Քիւչիւք Միլլէթ
խան Ղալաթիա

---

## ԲԱԲԱՅԱՆՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրբուլ, Միջերկրական և Օտեսայի մէջ կանոնաւորապէս բանող

ՇՈԳԵՆԱՒՔ

| Անուանք | Թոնոյ | Նաւապետք |
|---|---|---|
| Ալա Սոֆիա | 3,000 | Պըչը |
| Արարատ | 2,500 | Բոճըրս |
| Աղլանտիա | 2,500 | Քրուիքշանք |
| Լագոնիա | 2,500 | Ռոպինս |
| Մասետոնիա | 3,500 | Մարշ |
| Րումելիա | 2,800 | Ֆօթըրճիլ |

Մասետոնիա շոգ. Օգոստոս 15ին Պաթումէն ասա պիտի գայ և անմիջապէս Լիվըրբուլ պիտի ուղեւորի:

Րումելիա շոգենաւն Օգոստոս 15ին Լիվըրբուլէն ասա կ'սպասուի:

Ընկերութիւնն օրինաւոր գներով վաճառք կ'ընդունի Եւրոպական երկիրներու և Ամերիկայի համար:

Ամեն դիւրութիւն և հանգստութիւն կը տրուի ուղեւորաց:

Դ՛իմել առ ԴԱՆԻԷԼ, ԲԱԲԱ ԵՒ ԸՆԿ.
Գործակալք.

---

Արտօնատէր, Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

---

## ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE
*Insurance company*
ՆՈՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԵՒ ՄԸՐՔԸՆԹԱՅԼ
Լոնտրայի և Էտինպուրկի ապահովութեան ընկերութիւն

| | | Անգլ. Լիր. |
|---|---|---|
| Արտօնեալ դրամագլուխ | | 3,000,000 |
| Բաժանորդագրեալ դրամագլուխ | | 2,500,000 |
| Վճարեալ » | 625,000 | |
| Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ | 1,592,235 | |
| Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ | 3,841,194 | |
| | | 6,058,429 |
| Հրդեհի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ | 1,186,865 | |
| Կենաց ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ | 551,307 | |
| | | 1,738,172 |

NORTHERN
*Assurance company*
ՆՈՐԹՀԸՐՆ
Լոնտրայի և Էպէրտինի ապահովութեան ընկերութիւն

| | | Անգլ. Լիր. |
|---|---|---|
| Բաժանորդագրեալ դրամագլուխ | | 3,000,000 |
| Վճարեալ » | 300,000 | |
| Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ | 811,871 | |
| Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ | 1,778,300 | |
| | | 2,890,171 |
| Հրդեհի ճիւղէն հասոյթ 1882 տարւոյ | 520,206 | |
| Կեանքի ճիւղէն հասոյթ 1882 տարւոյ | 251,572 | |
| | | 771,778 |

Ստորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծանուցանէ թէ իրեն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուի, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանէ:

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումով մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալով ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնողներու ինչ որ ներկայացնել:

Գրեթէ ամեն կարգի փոխադաւոր ապահովութիւնք կրնան ընդունիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները:

---

MARITIME
*Insurance Cie limited of Liverpool*
Capital Lt. 500,000

## ՄԱՐԻԹԱՅՄ

Ծովային ապահովութեան ընկերութիւն

Դրամագլուխ 500,000 Անգլ. լիրա

Ստորագրեալը, շոգենաւերու և առագաստանաւերու մէջ ի վաճառս եղած ապրանքները և կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ:

Գիներուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուզողք պէտք է դիմեն Կալաթա, Քօմիսիօն խանի անկիւնը երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակն, առ

Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակատար յիշեալ Ընկերութեանց
ԳԱՌՆԻԿ Ց. ՍԻՐՈՒԲԵԱՆ

---

## ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷՅԻ

### ՇՈԳԵՆԱՒՈՒՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿԸ

1884 ՅՈՒԼԻՍ 16Է ՍԿՍԵԱԼ ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍ 31

(Բաց ի կիրակի օրերէն) Եւրոպական եզերքէն կամուրջ իջնող շոգենաւաց երթեւեկութեան ժամերը

| Ժ. Վ. | | Թ. |
|---|---|---|
| 11 15) | Ենիմահալլէ Մեղարպուրնու Պէյիւքտէրէ Թարապիա Ենիքէօյ (Ենիքէօյի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) | 18 |
| 11 50) | Ենիքէօյ Ըսթենիա Միրկեօն Պոյաճըքէօյ Ռ. Հիսար Պէպէք (Արնավուդքէօյի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) | 19 |
| 12 15) | Ր. և Ա. Գավագ Ենիմահալլէ Մեղարպուրնու Պէյիւքտէրէ Թարապիա Ենիքէօյ (Ենիքէօյի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) | 32 |
| 1 5) | Ենիքէօյ Ըսթենիա Միրկեօն Պոյաճըքէօյ Ռ. Հիսար Պէպէք (Արնավուդքէօյի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) | 20 |
| 1 30) | Ենիմահալլէ Մեղարպուրնու Պէյիւքտէրէ Թարապիա Ենիքէօյ (Ենիքէօյի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի և ուրբաթ օրերը Ըսթենիա Միրկեօն Պոյաճըքէօյ Ռ. Հիսար Պէպէք) | 34 |
| 2 05) | Ենիքէօյ Ըսթենիա Միրկեօն Պոյաճըքէօյ Ռ. Հիսար Պէպէք (Պէպէքի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի բաց ի ուրբաթ օրերէ) | 33 |
| 2 45) | Ենիմահալլէ Մեղարպուրնու Պէյիւքտէրէ Քիրէճպուրնու Թարապիա Ենիքէօյ Ըսթենիա Միրկեօն Պոյաճըքէօյ Ռ. Հիսար Պէպէք (Արնավուդգիւղէն մեկնող շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) | 28 |
| 4 | Ր. և Ա. Գավագ Ենիմահալլէ Մեղարպուրնու Պէյիւքտէրէ Թարապիա Ենիքէօյ Ըսթենիա Միրկեօն Պոյաճըքէօյ Ռ. Հիսար Պէպէք Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ | 32 |
| 5 15 | Ենիմահալլէ Մեղարպուրնու Պէյիւքտէրէ Թարապիա Ենիքէօյ Ըսթենիա Միրկեօն Ռ. Հիսար Պէպէք Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ: | 19 |
| 6 15 | Ենիմահալլէ Մեղարպուրնու Պէյիւքտէրէ Թարապիա Պէյգօզ Բաշաբահչէ Ենիքէօյ Միրկեօն Գանլըճա Ռ. և Ա. Հիսար Գանտիլլի Արնավուդքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյ Օրթաքէօյ Գուզկունճուք Պէշիքթաշ Իւսկիւտար | 25 |
| 8 15 | . և Ռ. Գավագ Ենիմահալլէ Մեղարպուրնու Պէյիւքտէրէ Թարապիա Ենիքէօյ Միրկեօն Պոյաճըքէօյ Ռ. Հիսար Պէպէք Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ (ուրբաթ օրերը Ըսթենիա պիտի հանդիպի) | 34 |
| 10 — | Մեղարպուրնուէն Պէյիւքտէրէ Թարապիա Ենիքէօյ Միրկեօն Ռ. Հիսար Արնավուդքէօյ Օրթաքէօյ Պէշիքթաշ | 33 |

Արնավուդքէօյէն կամուրջ իջնող շոգենաւաց ժամերը

| | | |
|---|---|---|
| 10 45) | Պէպէք Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ | 20 |
| 11 15) | Պէպէք Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ | 33 |
| 11 50) | Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ | 28 |
| 12 25) | Պէպէք Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ Գապաթաշ | 22 |
| 1 10) | Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ | 18 |
| 1 40) | Պէպէք Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ Գապաթաշ | 23 |
| 2 15 | Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ | 19 |
| 2 40) | Պէպէք Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ | 4 |
| 3 45) | Պէպէք Արնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիքթաշ Գապաթաշ | 17 |
| 10 50 | Հիսարէն ուղղակի կամուրջ | 19 |
| 11 10 | Պէպէքէն ուղղակի կամուրջ | 25 |

Ասիական եզերքէն կամուրջ իջնող շոգենաւաց ժամերը

| | | |
|---|---|---|
| 11) | Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյի Գուզկունճուք Գապաթաշ | 22 |
| 11 30) | Պէյգօզ Բաշաբահչէ Ռ. Բաշամահալլէ Գանլըճա . Հիսար Գանտիլլի (Գանտիլլիի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) | 23 |
| 12 5) | Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյի Գուզկունճուք | 25 |
| 1 15) | Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյի Գուզկունճուք | 4 |
| 1 30) | Պէյիւքտէրէ Թարապիա Պէյգօզ Բաշաբահչէ Գանլըճա . Հիսար Գանտիլլի (Գանտիլլիի նաւամատոյցը Գանտիլլիէն մեկնող շոգենաւին հետ պիտի հաղորդակցի և ուրբաթ օրերը Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյ Գուզկունճուք Իւսկիւտար) | 17 |
| 2 30) | Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյ Գուզկունճուք Իւսկիւտար (բացի ուրբաթէն) | 22 |
| 3 30) | Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյ Գուզկունճուք Պէշիքթաշ | 23 |
| 4 | Պէյիւքտէրէ Պէյգօզ Բաշաբահչէ Ռ. Բաշամահալլէ Գանլըճա Ա. Հիսար Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյ Գուզկունճուք: | 18 |
| 8 45 | Պէյիւքտէրէ Թարապիա Պէյգօզ Բաշաբահչէ Գանլըճա . Հիսար Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյի Գուզկունճուք Իւսկիւտար (ուրբաթ օրերը Ռ. Բաշամահալլէ) | 20 |
| 10 25 | Գանտիլլիէն ուղղակի կամուրջ | 23 |

(Բաց ի կիրակի օրերէն) կամուրջէն Եւրոպական եզերք երթեւեկող շոգենաւաց ժամերը

| | | |
|---|---|---|
| 1) | Պէշիքթաշ Օրթաքէօյ Արնավուդքէօյ Ռ. Հիսար Միրկեօն Ենիքէօյ Թարապիա Պէյիւքտէրէ Մեղարպուրնու Ենիմահալլէ | 28 |
| 1 30) | Գապաթաշ Իւսկիւտար Պէշիքթաշ Գուզկունճուք Օրթաքէօյ Պէյլէրպէյ Չէնկէլքէօյ Արնավուդքէօյ Գանտիլլի Ա. և Ռ. Հիսար Գանլըճա Միրկեօն Ենիքէօյ Թարապիա Պէյիւքտէրէ Մեղարպուրնու Ենիմահալլէ | 23 |
| 2 | Պէշիքթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Արնավուդքէօյ Պէպէք Ռ. Հիսար Միրկեօն Ենիքէօյ Թարապիա Պէյիւքտէրէ Մեղարպուրնու Ենիմահալլէ Ռ. Գավագ | 32 |
| 3 30 | Գապաթաշ Պէշիքթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Արնավուդքէօյ Պէպէք Ռ. Հիսար Պոյաճըքէօյ Ըսթենիա Ենիքէօյ Թարապիա Պէյիւքտէրէ Մեղարպուրնու Ենիմահալլէ | 19 |
| 5 — | Գապաթաշ Պէշիքթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Արնավուդքէօյ Պէպէք Ռ. Հիսար Պոյաճըքէօյ Էմիրկեան Ըսթենիա Ենիքէօյ Պէյգօզ Թարապիա Պէյիւքտէրէ Մեղարպուրնու Ենիմահալլէ և Գավագներ | 34 |
| 6 45 | Իւսկիւտար Պէշիքթաշ Գուզկունճուք Օրթաքէօյ Պէյլէրպէյ Չէնկէլքէօյ Արնավուդքէօյ Գանտիլլի Ռ. Հիսար Գանլըճա Միրկեօն Ենիքէօյ Թարապիա Պէյիւքտէրէ | 20 |
| 8 15 | Պէշիքթաշ Օրթաքէօյ Արնավուդքէօյ Պէպէք Ռ. Հիսար Միրկեօն Ենիքէօյ Թարապիա Պէյիւքտէրէ Մեղարպուրնու | 33 |
| 9 45 | Ռ. Հիսար Պոյաճըքէօյ Միրկեօն Ըսթենիա Ենիքէօյ Թարապիա Պէյիւքտէրէ Մեղարպուրնու Ենիմահալլէ | 32 |
| 10 30 | Ռ. Հիսար Պոյաճըքէօյ Միրկեօն Ըսթենիա Ենիքէօյ Թարապիա Քիրէճպուրնու Պէյիւքտէրէ Մեղարպուրնու Ենիմահալլէ | 17 |
| 11 10 | Ենիքէօյ Թարապիա Պէյիւքտէրէ Մեղարպուրնու Ենիմահալլէ | 34 |
| 11 30 | Պէպէք Ռ. Հիսար Պոյաճըքէօյ Միրկեօն Ըսթենիա Ենիքէօյ | 18 |

Կամուրջէն Արնավուդքէօյ երթեւեկող շոգենաւաց ժամերը

| | | |
|---|---|---|
| 11 45) | Ուղղակի Պէպէք | 22 |
| 12 40) | Ուղղակի Արնավուդքէօյ | 18 |
| 1 10) | Ուղղակի Պէպէք | 23 |
| 1 45) | Ուղղակի Արնավուդքէօյ | 19 |
| 2 10) | Ուղղակի Պէպէք | 4 |
| 3 15) | Ուղղակի Պէպէք | 17 |
| 9 50 | Պէշիքթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Արնավուդքէօյ Պէպէք Ռ. Հիսար (Վօսփոր կէնող շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) | 19 |
| 10 25 | Պէշիքթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Արնավուդքէօյ Պէպէք | 25 |
| 11 5 | Գապաթաշ Պէշիքթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Արնավուդքէօյ Պէպէք (Ենիքէօյի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) | 20 |
| 11 45 | Պէշիքթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Արնավուդքէօյ Պէպէք | 33 |
| 12 — | Պէշիքթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Արնավուդքէօյ | 25 |

Կամուրջէն Ասիական եզերք երթեւեկող շոգենաւաց ժամերը

| | | |
|---|---|---|
| 11 35) | Իւսկիւտար Գուզկունճուք Պէյլէրպէյ Չէնկէլքէօյ Վանիքէօյ Ա. Հիսար Գանլըճա Պէյգօզ Ենիքէօյ | 20 |
| 12 35) | Ուղղակի Գանտիլլի | 4 |
| 12 45) | Իւսկիւտար Գուզկունճուք Պէյլէրպէյ Չէնկէլքէօյ Վանիքէօյ Ա. Հիսար Գանլըճա Ենիքէօյ (բաց ի ուրբաթ օրերէ) | 33 |
| 1 55) | Ուղղակի Գանտիլլի (բացի ուրբաթ օրերէ) | 22 |
| 2 15) | Իւսկիւտար Գուզկունճուք Պէյլէրպէյ Չէնկէլքէօյ Վանիքէօյ Գանտիլլի Ա. Հիսար Գանլըճա Բաշաբահչէ Պէյգօզ Պէյիւքտէրէ (ուրբաթ օրերը Ռ. Բաշամահալլէ) | 18 |
| 2 55) | Ուղղակի Գանտիլլի | 23 |
| 9 25 | Գապաթաշ Պէշիքթաշ Գուզկունճուք Պէյլէրպէյ Չէնկէլքէօյ Վանիքէօյ Գանտիլլի (Գավագներ գացող շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) | 23 |
| 10 15 | Գանտիլլի Ա. Հիսար Գանլըճա Բիֆաթբաշա Բաշաբահչէ Պէյգօզ Թարապիա Մեղարպուրնու Գավագներ | 18 |
| 10 40 | Պէշիքթաշ Գուզկունճուք Պէյլէրպէյ Չէնկէլքէօյ Վանիքէօյ Գանտիլլիի Ռ. Հիսար (Գանտիլլիի նաւամատոյցը Պէյգօզի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) | 28 |
| 11 10 | Գանտիլլի Ա. Հիսար Գանլըճա Ռ. Բաշամահալլէ Բաշաբահչէի Պէյգօզ | 23 |
| 11 40 | Գապաթաշ Գուզկունճուք Պէյլէրպէյ Չէնկէլքէօյ Վանիքէօյ | 22 |

Մէն ուրբաթ շոգենաւ մը կամուրջէն ժամը 4ին մեկնելով Իւսկիւտար Գուզկունճ. Պէյլէրպէյ Չէնկէլքէօյ Վանիքէօյ Գանտիլլի Ա. Հիսար Գանլըճա Ռ. Բաշամահալլէ Բաշաբահչէ Պէյգօզ Թարապիա Պէյիւքտէրէ պիտի հանդիպի և անտի ժամը 5.45ին մեկնելով և յիշեալ նաւամատոյցները հանդիպելով պիտի իջնէ ի կամուրջ: Մէն ուրբաթ երեկոյ ժամը 11.15ին շոգենաւ մը Ենիմահալլէէն կամուրջ պիտի իջնէ Մեղարպուրնու Պէյիւքտէրէ Թարապիա Ենիքէօյ Միրկեօն Ռ. Հիսար Արնավուդքէօյ Պէյլէրպէյ Օրթաքէօյ և Պէշիքթաշ հանդիպելով:

Այս նիշը ) կրող շոգենաւերը Օգոստոս 11էն յետոյ մէկ մէկ քառորդ վերջը պիտի մեկնին:

---

### ԻՒՍԿԻՒՏԱՐ ԵՐԹԵՒԵԿՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐ

ԲԱՑ Ի ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԷՆ

| ԻՒՍԿԻՒՏԱՐԷՆ ԿԱՄՈՒՐՋ | | ԿԱՄՈՒՐՋԷՆ ԻՒՍԿԻՒՏԱՐ | |
|---|---|---|---|
| 11 15 | 6 15 | 11 — | 7 — |
| 12 — | 7 — | 11 45 | 8 15 |
| 12 30 | 8 10 Պէշիք | 12 20 | 9 — Պէշիք |
| 1 — | 9 — | 12 50 | 9 35 |
| 1 30 | 9 35 Պէշիք | 1 20 | 10 5 Պէշիք |
| 2 — | 9 55 | 1 50 | |
| 2 30 | 10 25 | 2 20 | 10 35 Գզլճճ * |
| 3 — | 10 50 | 2 50 | |
| 3 30 | 11 20 | 3 20 | 11 — |
| 4 10 | 11 40 | 3 55 Պէշիք | 11 25 |
| 4 45 Պէշիք | | 4 30 | 11 50 |
| 5 30 | 12 5 | 5 15 | |
| | | 6 15 Պէշիք | 12 5 Գզլճճ * |

(* Այս շոգենաւները Հրէից տօներուն չպիտի երթեւեկեն)

### ՀԱՐԷՄ ԻՒՍԿԷԼԷՍԻ ԵՐԹԵՒԵԿՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐ

ԲԱՑ Ի ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԷՆ

2 30 Հարէմէն Սալաճագ (բաց ի կիրակի օրերէն)
4 Հարէմէն Սալաճագ
10 45 Հարէմէն »
2 15 կամուրջէն Հարէմ Սալաճագ (բաց ի կիրակի օրերէն)
3 30 կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ
10 30 կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ

### ԻՒՍԿԻՒՏԱՐ ՍԻՐՔԷՃԻ ԻՍԿԷԼԷ ԵՒ ԳԱՊԱԹԱՇԻ ՄԻՋԵՒ ԿԱՌԱԲԱՐՁ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

3 15 Իւսկիւտարէն Գապաթաշ Սիրքէճի
4 30 Իւսկիւտարէն Սիրքէճի
10 — Իւսկիւտարէն Սիրքէճի
11 — Իւսկիւտարէն Գապաթաշ
3 45 Սիրքէճիէն Իւսկիւտար
5 — Սիրքէճիէն Գապաթաշ Իւսկիւտար
10 30 Սիրքէճիէն Իւսկիւտար
11 15 Գապաթաշէն Իւսկիւտար